Կարեն Անտաշյան



պոեզիա 78 %

անտաշտ

Երեւան
Հեղինակային հրատարակություն
2009

Իսկ եթե ջուր էի՞...

Լ. Գրիգոր

Կարեն Անտաշյան

անտաշատ

78 % պոեզիա

www.antashat.com

iarar
ideas studio

ՀՏԴ 891.981-1 Անտաշյան
ԳՄԴ 84Հ7-5
Ա 620

Անտաշյան Կարեն
Ա 620 Անտաշատ. պոեզիա 78%: Բանաստեղծ./ Կարեն Անտաշյան.-Եր.:
Հեղինակային հրատարակություն, 2009.-104էջ:

ԳՄԴ 84Հ7-5

ISBN 978-9939-53-502-9

© Կ.Գ. Անտաշյան, 2009թ.
© iARAR [ideas studio], 2009թ.

ԱՆՏԱՇԱՏ

(Տուրիստական ուղեցույց)

Նշանակությունը: Բնակավայր-մեհյան, բնակավայր-մեկուսարան, բնակավայր-ուխտատեղի:

Տեսակը: Քաղաք:

Բնույթը: Ծրջիկ քաղաք (այսպիսի քաղաքները կարող են փոխել իրենց դիրքը ժամանակի և տարածության մեջ):

Հիմնադրումը: Քաղաքը միևնույն տեղում վերահիմնադրվել է 5 անգամ, հավանաբար՝ միմյանց մասին անտեղյակ տարբեր մարդկանց կողմից: Նրա նախկին 4 շերտերը բացահայտվել են 5-րդ անգամ հիմնադրվելուց հետո: Չի բացառվում, որ այդ բացահայտումներն էլ վերջնական չեն: Զարմանալիորեն հիմնադիրներից և ոչ մեկը քաղաքում չի թաղվել: Մի առասպելում ասվում է, որ նրանք բոլորն էլ եկել են գարնան առաջին անձրևից հետո և անհետացել նույնպես այդ ժամանակ: [3]

Խորհրդանիշը: Հատկանշական է, որ քաղաքի բոլոր շերտերում հայտնաբերված կիրառական արվեստի նմուշների, կենցաղում օգտագործվող իրերի, հագուստի ձևավորման և տեղի ճարտարապետության հիմնարար տարրերը խմբավորվում են հետևյալ 3 ընդհանրական սիմվոլների մեջ, որոնք մասնագետների գնահատմամբ՝ խորհրդանշում են կենսական էներգիայի արական, իգական և մայրական ձևերը, նրանց փոխազդեցությունը միմյանց և նախաստեղծ ջրի հետ:

արական մայրական իգական

Աշխարհագրական դիրքը: Վերջին 12.000 տարիներին գտնվել է Հայկական լեռնաշխարհում:

Կոորդինատները: Բնակավայրը հիմնականում ընդունված է տեղորոշել հետևյալ 5 կետերի միջակայքում՝

39º42′ 11.12″N	38º30′09.81″N	40º30′ 08.88″N	41º05′37.54″N	40º08′ 59.56″N
44º18′ 12.93″ E	43º20′ 26.26″E	43º34′ 00.97″E	44º42′ 44.15″E	44º30′ 32.09″E
5089m	1700m	1490m	1015m	959m

Վարչատարածքային բաժանումը: Վարչական բաժանումը կատարված է ուղղահայաց (վարից վեր կամ վերից վար) սկզբունքով, ուստի քաղաքի պայմանական 5 վարչական միավորները տեղակայված են անմիջականորեն միմյանց վրա:

Քաղաքապետը: Քաղաքում ժողովրդավարական ինստիտուտները զարգացած չեն և մինչ օրս սա նշանակովի պաշտոն է, սակայն ով, երբ և ինչ սկզբունքով է նշանակում քաղաքապետերին՝ գաղտնիք է նույնիսկ նշանակվողների համար:

Առաջին հիշատակությունը: Յուրաքանչյուր հիմնադրումից հետո ժամանակի արտահայտչամիջոցներով քաղաքի մասին գրավոր վկայություններ են թողնվել, սակայն դրանցից և ոչ մեկը լիարժեք չի պահպանվել: Այս գիրքը քաղաքին առնչվող թվով 5-րդ գրավոր արձանագրությունն է, որը նաև ամփոփում է նախկին արձանագրություններից պահպանված մասունքները:

[4]

Կլիման: Երբ սկսվում է անձրևների սեզոնը, հիմնականում գարնան առաջին անձրև է գալիս: Ձմեռն իր ծայրահեղ սաստկությանն է հասնում փետրվարին, երբ ամբողջ բուսական և կենդանական աշխարհը մահանում է: Այդ պատճառով էվոլյուցիան* անտաշատում ստեղծել է տեսակների պահպանության յուրահատուկ մեխանիզմ: Ջուրն անձրևների սեզոնի ընթացքում հիշողություններ է հավաքում կենդանի տեսակների մասին և պահպանում դրանք ամբողջ ձմեռ, իսկ գարնան գալստյան հետ դրանք նորից փոխանցում է անկենդան նյութին: Քանի որ ամբողջ ձմեռվա ընթացքում ջուրը երազներ է տեսնում, ապա արթնանալուց հետո հաճախ շփոթում է դրանք նախորդ տարվանից մնացած հիշողությունների հետ: Այս պատճառով անտաշատում կենդանական և բուսական աշխարհն ամեն տարի զգալիորեն տարբերվում է նախկինում եղածներից և հետո լինելիքներից: Մասնագետների գնահատմամբ՝ սա Էվոլյուցիայի բարձրագույն դրսևորումն է և Երկրի վրա վաղ թե ուշ սպասվող համաշխարհային աղետին դիմակայելու ընդունակ առայժմ միակ կենսահամակարգը:

Վիզային ռեժիմը: Աշխարհով մեկ գոյություն ունեն անտա-

** - նշումով բառերի եւ արտահայտությունների մեկնությունը տե՛ս «Մասնավոր տեղեկանի» բաժնում:*

շատի հազարավոր տուրիստական նշանակության նմանակներ, որտեղ բազմաթիվ վճարովի ծառայություններ են գործում: Դրանք բոլորն էլ, ըստ էության, շահույթ ստանալու նպատակով են ստեղծված: Նմանակներից շատերը նույնիսկ հավակնում են իրական համարվելու և ունեն դրա համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Սակայն իրական անտաշատը մեկն է, և նա ինքն է ձեզ գտնում, եթե կա դրա անհրաժեշտությունը:

Հասարակական կյանքը: Անտաշատի յուրաքանչյուր բնակիչ նրա միակ բնակիչն է:

Բնակչությունը: ▲ Նախորդ 12.000 տարիների ընթացքում բնակչության քանակը տատանվել է [0;1] միջակայքում, սակայն վերջին տասնամյակների կլիմայական փոփոխությունների հետևանքով, ըստ որոշ հաշվարկների, հնարավոր են բնակչության թվի շեղումներ [-2; 2] միջակայքում:

Խտությունը: 10^{-5} մարդ/կմ^2

Ժողովրդագրական կազմը: Հիդրոիդ՝ 78%, արմենոիդ՝ 20%, աստիրոիդ՝ 1%, անտաշոիդ՝ 1%:

Կրոնական պատկանելությունը: Բնակավայրի Ա1 վարչական միավորում հայտնաբերվել են խեցեղենից, բրոնզից, ոսկուց, կրաքարից ջրաստվածներ և բազալտից վիշապներ*, որոնցից ամենամեծի բարձրությունը հասնում է 5 մետրի: Ա2 միավորն ամբողջությամբ բաղկացած է միմյանց փոխկապակցված քարանձավային լաբիրինթոսից, որոնցում հիմա մեծ քանակությամբ մեթան գազ է հավաքվում, ինչը հրդեհավտանգ է դարձնում այն: Քարանձավի պատերին առկա են արևաստծո պաշտամունքի և արիականության այլ խորհրդանիշներ. ձախ և աջ սվաստիկաներ, կենաց ծառի հոյակապ պահպանված ժայռաքանդակ, բնական մահով մահացած ձիու մնացորդներ: Քարանձավներից վերջինում հայտնաբերվել են զրադաշտությանը բնորոշ գրանշաններ: Ա3 շերտն ամբողջությամբ էրոտիկ բնույթի քանդակներով և որմնանկարներով զարդարված կիսաքանդ տաճարային համալիր է, որի ներսում պահպանվել է քաղաքում գինեգործության զարգացման բարձր մակարդակի մասին վկայող մշակութային շերտ: Ա4 շերտում հիմնականում գերիշխում են միմյանց հաջորդող կարմիր, դեղին, սև և սպիտակ անապատային ավազը, ինչը վկայում է այդ ժամանակաշրջանում քաղաքում տիրած դժվար ժամանակների, երաշտի և սովի մասին: Այս շերտում հայտնաբերվել են նաև խաչափայտի մասունքներ: Ա5 կամ ժամանակակից շերտը որպես այդպիսին դեռևս նշագծված չէ, որովհետև դեռևս ձևավորման փուլում է գտնվում:

Ճշգրիտ գիտությունները: Որոշ ֆիզիկոսներ նշում են, որ

անտաշատը հնարավոր է ուսումասիրել միայն ներսից, նախ և առաջ, որովհետև այն դուրս չունի, իսկ այդ պարագայում էլ ուսումնասիրությունն ամբողջական չի լինի: Որոշ համարձակներ էլ պնդում են, որ երկրաչափորեն այն թեկուզ անկայուն, բայց մոտավորապես հսկայական նեյրոնի* տեսք ունի: Կարծիք կա նաև, որ անտաշատի գոյության հետքեր կարելի է փնտրել ցանկացած տեղ, որտեղ ջուր կա:

Բնիկների ոչ պաշտոնական տեղանվանումը: Անտաշատցի, անտաշենցի, անտաշական:

Պաշտոնական կայքը: www.antashat.com

Հայտնի ասույթներ քաղաքի մասին:

«Դու կարող ես ապրել այնտեղ մի ամբողջ կյանք ու մեռնել նրա մեջ՝ երբևէ չկասկածելով այդ մասին»:

«Այնտեղ կտեսնես բազմաթիվ մարդկանց սիրո, տառապանքի, ստեղծագործության, պաշտամունքի հետքերը, սակայն երբևէ որևէ մեկի չես հանդիպի»:

«Լավագույն չորաթանն ու հոնի օղին այստեղ են ստացվում»:

Կարեն Անտաշյան

անտաշաս. պոեզիա 78%

Բերքի տոն

www.antashat.com

Եւ ոչ ով նոր գինին հին տկերի մէջ չի ածիլ. ապա թէ ոչ, նոր գինին տկերը կ՚պատառէ. ինքն էլ կ՚թափուի, տկերն էլ կ՚կորչեն։ Այլ նոր գինին նոր տկերի մէջ պէտք է ածուի, եւ երկուսն էլ կ՚պահուին։

[8]

Աւետարան ըստ Ղուկասու, Գլ. 5, 37-38

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՆԱԽԱՃԱԾ

Մի օր ձեռքս հասավ Արևին...
Հըմ...
Ես ու Աստված շունչներս պահեցինք:
Մեզ թվաց՝ կասես.
«Լսի՛ր, շատ չե՞ս ձեռքերիդ ազատություն տալիս»,
բայց չասացիր,
և Աստված ժպտաց,
ու ես ներս մտա...
խաղողօրհնեքից* 5 օր առաջ
թարմ քամած, մի քիչ թթվաշ
խաղողահյութի նախաճաշով
և Արևածաղիկը բերանիս մեջ -
իբրև մեղք, որը պիտի հասցնեի գործել,
քանի դեռ ուժի մեջ էր ապաշխարության խորհուրդը:

Մինչ ինքն իրենից թաքուն եփվում էր
կարմիր լոբով ապուրը,
ամեն անգամ փշաքաղվելով
քո անհամբեր համտեսումների ներխուժումից՝
դեղին արևածաղիկներն ու կապույտ երկինքը
համբուրվել էին սովորում
հանուն կանաչ շարունակության:

Անսովոր հոտ եկավ սովորական դարձած ստերից:

Այնտեղ, ուր ասֆալտը սահուն վերածվում էր երկնքի,
ես հասա քեզ,
և խելագար անձրևի սպասումից
արդեն խոնավ էին
քնքշորեն բացված թևիկներդ:

Իսկ հետո... սև ու սպիտակ աչուկներ,
որոնց առկայությունից
անդառնալիորեն բարձրանում էր
Տիեզերքի ջերմությունը՝
հասնելով կենսականորեն անհրաժեշտին ու անցնում
ևս 5 մատնաչափ...
.....
Արդեն 11-րդ ամիսն էր,
իսկ էդ դինջը մտքերով էր ընկել՝
մոռանալով ծնվելու մասին:
Այնպես որ, տվյալ պահի դրությամբ՝
դեռևս անուն չուներ
սերը:

ՉՈՒՇԱՆԱՍ, ԷԼԻ՛

Եկար...

Այնպես անմեղորեն (ի՞նչ է եղել որ)...
գարնան առաջին ծաղիկի պես բացվել
ժպտու՛մ ես,
ասես առաջինն, ինչ տեսնում ես կյանքումդ,
գարունն է...

Ու ասենք՝ քեզ ինչ, չէ՞,
որ ես մի կերպ եմ ապրել այս տիեզերական ձմեռը
ու թե չդիմանայի էլ... մեկ էր արդեն.
դու չկայիր (խմելու կար),
դու չկայիր
(մեռանք ձուկ և ձկան մասին ենթադրություններ ուտելով),
անաստված... սովորական էր դարձել նաև քո չլինելը:

Հետո էլ կասես՝
[10] գոռում ես քնի մեջ, խեղդվում ես քնի մեջ,
ընկնում ես, ընկնում ես, ընկնում ես...

Անտաշատի կեսգիշերային մահաշունչ քամին
ճոճում էր վզիցս կախված
«այստեղից արագ անցեք՝ փետրվար է»
ցուցանակը,
ու հապաղած հետաքրքրասերների երեսին թքում
ատամների արանքում մնացած աշնանային տերևները
և ատամների կռճտոցն այն թերահավատ ծառերի,
որ քնի մեջ մեռան ցրտից՝ այդպես էլ գարունը չտեսած.
միակ այլընտրանքն էր վտանգավոր լռության.
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԷՐ.
չեղած տեղից դա էլ էր կյանք համարվում
(հա ի՞նչ):

Նրանք բոլորն էլ գնացին
ինչպես եկել էին՝
հլու-հնազանդ, ասես սցենարով հենց այդպես էր
(պարզվեց՝ իրոք այդպես էր):
Նրանք,
ում ակնոցների տակ՝ աչքեր,

շրթներկի տակ՝ շուրթեր,
շորերի տակ՝ մաշկ
մաշկի տակ... անվերջ քեզ էի հոտոտում:

Իսկ դու... հատկապես գալուցդ 5 րոպե առաջ
ի՞նչ այնկողմնային էիր բուրում...

Նստիր կողքիս,
շոշափիր զարկերակս,
սիրտս լսեցի՛ր...
եթե հիմա ինֆարկտից* չմեռնեմ...
մի, մի... ես գիտեմ՝
դու չես ուշանում երբեք.
ուղղակի մենք ենք մի տեսակ արագ ծերանում:

Դե արի, մոտս արի...

ՏԱՆԳՈ

ՉԷ, չէ՛, սպասիր...

Ծտապում ես...
երբ հաշվում ես ժամանակը,
այն միշտ չի հերիքում,
և սկզբի ու վերջի միջև ճզմված
քո կախյալությունը
մահկանացու է դարձնում
ինձ ու քեզ:

- Պետք չէ, լռի՛ր ...

Ես մաշկիցդ շնչում եմ արդեն իմաստները,
որ պիտի փորձեիր բառերի վերածել:
Երբ իմաստներն ընկալված են,
զգացված ու ապրված՝
բառերն աղմուկ են միայն,
աղմուկը՝ կիսատություն,
աղմուկը տառապանք է,
22222....

Մի՛ պաշտպանվիր...

Ինքդ քեզնից
չես կարող փախչել, միևնու՛յն է:
Զգու՞մ ես համակերպումի ավազե քնքշությունը,
երբ ծովը տիրում է ժայռերին
անզեն աչքի համար
աննկատելիորեն դանդաղ:
Արարումը կանացի է:

Մի՛ հանվիր...

Լա՜վ, գոնե ժպիտդ թող.
ես հագիդ այնքան սազում եմ նրա հետ:

Սպասիր մի քիչ էլ...

Ինչպե՞ս չես ալարում.

հիմա պիտի նստես մինչ առավոտ
իմ ու քո՞ անես
(ինձ թվում է)
անդառնալիորեն միախառնված
մեր արյան կարմիր գնդիկները...

ԳԼԽԱՊՏՈՒՅՏ

Գինեհամ պաչիկներ և մշուշոտ բառեր,
սպասիր… երջանկություն՝ կծել-մծել չկա…
Հարևանները, վարագույրները…
ներերակային քչփչոց,
թաքնվելու ցանկություն,
լույսը, լույսը… ավելորդ թիթիզություն է,
ներսի և դրսի սահմանները
լղոզված են իմպրեսիոնիզմի* ոճով:
Լրիվ անսպասելի -
իրենք իրենց թերթվող անապատներ և ծովեր -
պետք է միայն թքոտել… ցուցամատը -
դեղնակարմիր և կապտամոխրագույն,
վարդագույնի նրբին անցումներով անօդ տարածություն
և ամեն անգամ միևնույն տեղում… ձնծաղիկներ…
(ֆենիլէթիլամինային* շոկ)
բացահայտումներ և համակերպում,
ընդվզումներ և շշուկներ,
[14] տաք ու ցավոտ,
անիմաստ ու խորհրդավոր,
մթնշաղ և ցայգալույս -
ավարտվեցիր… սկիզբ առար
իմ ներսից…

- Էս ի՞նչ արիր, խելա՛ռ, ելակ լուսամուտի մոտ.
ինձ թվում է՝ գարունը 3 ամիս շուտ սկսվեց…
(բա Նոր տարին…):

Ձնհալի կաթոցք,
ճպռոտ աչքերը տրորող գարուն,
գինեհամ բողբոջներ և մշուշոտ ձնծաղիկներ…
(գժո՛, արդեն անդառնալի է ձնհալը…)
փողոցներում լիքը բողբոջած ձեռքեր,
գլխարկներ, վերարկուներ, շրթունքներ,
և տիեզերքը պարուրաձև ալիքող
գլխապտու՜յտ…
գլխապտու՜յտ…
գլխապտու՜յտ…

ԾՆՆԴՈՑ

Ջրերը գնացին:
Չէ, չէ մի... բլա-բլա...
բա տեսա՞ր դու,
Անահի՛տ*,
դու գիտես որտեղից խուտուտ տալ Էությունը,
որ տիեզերքում առաջանա մարմնանալու ցանկություն...
Հա՛,
համենայնդեպս,
իմ խիստ հերթական դեմքին էլ ուրվագծվեցին
ջրի արարչական ինքնաճանաչման ուրվագծերը,
և աչքաուլունքային չխկչխկոցին դեռ անսովոր
իմ ականջներից
բըզ-բըզի-բըզե, բզեզներ, մայիսյան բզեզիկներ
դուրս թռան:
Չէ-չէ մի... բլա-բլա...
բա տեսա՞ր դու:

- Հա՛,
ես երազ եմ լսել 127-րդ օրը. նրա երազն էր:
Անահի՛տ,
Աստված ասում էր.
- Բլա-բլա, գըղ-գըղ, եղիցի սեր...
Ասում էր, էէէ՜հ, գլուխդ չգնա՞ց էդ զըռ կարմիր երկնքից,
որն անկուշտի պես պիտի ուտես ու խմես,
մինչ մեծանաս այնքան, որ հասնես Արևին
և, առռը հա՛, քեզ նյարդային համակարգ,
որ տառապես այնքան, մինչ հասկանաս,
թե ինչ են կարեկցանքն ու պարտքը:

Չէ-չէ մի... բլա-բլա...
բա տեսա՞ր դու... վախեցանք:
Իսկ ես հիշում եմ՝ կար մի ժամանակ,
երբ ես ու դու չկայինք...
դրա համար էլ Անահիտը միշտ կլինի:
(Ես կկարոտեմ քեզ... բայց դու մոռացիր ինձ: Ց՛):

Աչքներդ լու՜յս, ծակ աչքներդ լու՜յս
բլա-բլա-լալա... լեզուս չի պտտում ասեմ...
էէէհ, եկել եմ նախորդ անգամից մնացած
պարտքս տալու:

ԱՆՈՒՇԻԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

*(Տատիս հեքիաթների չափ հին
Անուշիկի պատերազմը)*

-1-
Ծունչս կտրվում է... միակության մտքից...

-2-
Մի պատահական մայրաքաղաքի
պատահական հեղափոխության ֆոնին,
լրիվ պատահականորեն սկսված
գարնան առաջին անձրևից փախչելիս,
պատահական շքամուտքում
պատահական «սիրում եմ քեզից»
կտրվեց շունչը...

-3-
Համբույրի համար ճմրթված շուրթեր՝
մու-մու, մու-մու...

-4-
Սկզբում տանիքներն էր բարձրանում,
որ ձեռքը հասնի աստղերին,
հետո մեռած ձևացող քաղաքի վրա
շպրտում էր ճերմակ թևերով թղթե հրեշտակներ,
որ կարողանում էին թռչել
մինչ գետնին ընկնելը:
Կիթառացավով տարված՝ չէր հասկանում,
որ այստեղ յուրաքանչյուրը
ձանձրույթից մեռնելու իրավունք ունի,
ու թեպետ իր շնորհիվ աշխարհը
ավելի անթրաշ էր դառնում,
բայց ոչ անպայման՝ ավելի երջանիկ:

Կարգին սովելուց հետո
միշտ տուն էր գալիս հեղափոխությունից,
ու դուռը միշտ բացում էր
մի բարձի վրա սկսված, ավարտված
և շարունակվող կյանքը,
որից անմեղորեն

տապակած կարտոֆիլի հոտ էր գալիս:

Ընթրիքից հետո
ի՞նչ կապ ունի ինքն այդ ամենի հետ:
Ուղղակի մի կիսասովետական գիշեր
հայրիկն ու մայրիկը
սովորականից ավելի կրքոտ են սիրել իրար,
սովորականից ավելի բարձր են թռել,
ու թթվածնի պակասից...
կտրվել է շնչառությունը...

-5-

Գզգզված, ինչպես մարտիմեկյան քամու
բերանն ընկած մասրենին,
քանդուքարափ հայացքով,
ջարդուփշուր բարի հեքիաթների մասին
նոր չար հեքիաթներ
ծամծմելով...
Թափթփված հոգենյութ -
զրդուզիբիլ...

Հերթական ինքնասպանությունից հետո
տուն է վերադառնում առավոտյան,
այս անգամ՝
արյունլվա ձեռքերի ու ոտքերի միջև
սրտի պես թպրտացող արևը,
նվնվալով այն մասին,
որ ձանձրույթից մեռնող քաղաքի
նկարովի աստղերը հազվադեպ են ընկնում
հանուն երազանքների իրականացման -
ավելին՝ չեն ընկնում:

-6-

Սակայն
անխուսափելիորեն պարզվում է,
որ Աստծո և բոյֆրենդների մեջտեղում
թռչնաձկների մասին լեգենդներ հորինող
դեռևս անուն չունեցող մի արարած կա,
ով ինչ-որ տարօրինակ քաղաքի միակ բնակիչն է
և ձմերուկի հոտ է առնում օգոստոսից:
Ու թեպետ նա վաղուց արմատակալել է այնտեղ,

բայց լիալուսնի ժամանակ
փորիկի և մեջքի վրա թռիչքի դասեր է տալիս
կեսգիշերից հետո։

-7-

Փոքրիկ Իշխանը* մաշկի վրա և մաշկի տակ։

-8-

Այս գիշեր,
իբրև ապրելու հիմնավոր պատճառ,
կարմիր է սպասումը։

-9-

Վաղն անպայման կանաչ կհագնի նրա համար։

ԱՐԵՎԻ ՄԱՍՆԱԿԻ ԽԱՎԱՐՈՒՄ

Քո տարիքում սերը հեշտ է,
ինչպես տանիքից աշխարհի վրա
թքել-հեռանալը
երկինք:

Քո տարիքում
կյանքը օգոստոսին ձեռքերի մեջ հալվող
վանիլե պաղպաղակի մասին է,
կյանքը քայլել է սովորում
բարձրակրունկների վրա,
կյանքը ցանցառ է ու մերձիմահ,
կյանքը չի համակերպվում
իր անուն/ազգանուն/հայրանունի հետ:
Քո տարիքում
ամեն երրորդ գրեթե ասպետից
ձին է պակասում՝
նրա հետ ինչ-որ անմարդաբնակ կղզի
փախչելու համար:
Քո տարիքում
անթրաշ ու փնթի քեռիներից
տղամարդու հոտ է գալիս:

(Մի անգամ
անտաշատի փետրվարում
ես ու դու համընկանք...
էնդորֆինային* համբույրով):

Եվ նույնիսկ ձյան ճերմակ վերմակի տակ
տաքը փոքրիկ լկտիություններ է գործում,
որովհետև քո տարիքում
միշտ ամառ է,
գիշեր,
լիալուսին...

ԱՐԾՎԱՔԻԹ ԳՐԻՊ

Հաաափչյու... հ... Տե՛ր Աստված...
(առողջություն):

Ամեն ինչ սկսվեց հընթացս նոյեմբերի:

Աշխատավարձից դժգոհ,
կիսաչարամիտ,
բայց իր գործի վարպետ հավաքարարի պես
անձրևը երեկոյախառը լվանում էր
անտաշատի պարունակությունը՝
ներծծվելով ոսկորների մեջ:
Իրենց հաշվարկով աչքից հեռու
անորոշ սեռի երկու թրջված դաշտամուկ
փիլիսոփայում էին այն մասին,
որ... Ֆսսսս... (պահի՛)... հուուուու...
ծուխը խոտի էվոլյուցիոն երազն է
թռչուն դառնալու մասին...
հի... անընդվերջ... հի-հի-հի:

Ռոմանտիկա
(սովորական եղանակային չտեսություն):

Ինչ ցուրտ է աշխարհում էս վերջերս.
քաղաքի տարբեր ծայրերում տիեզերքը սկսում է սրթսրթալ...
Կեսգիշերն անց
պատմությունը շարունակվում է վերմակի տակ.
Առողջ մարմնում՝ առողջ... մարմին.
ջերմության ուրիշ աղբյուր
կարծես թե մտքովս չի էլ անցնում հիմա...

Ծոյված լինելու ցանկությունից ամբողջ գիշեր այրվելով՝
առավոտյան կողմ քիթը և քիթիկը հայտնվում են
իրադարձությունների կենտրոնում.
- Բարի լույս, քի՛թ:
- Բարև, քիթի՛կ:
Սկսվում է հոգենյութի տառապալից արտահոսքը:

Բոլոր պինդ մարմիններն էլ ներսից փափուկ են,
երբ սիրահարված են և հեղուկ, երբ...

հաաաաա... փչյու -
պինդ մարմինների ֆիզիկան անշրջանցելի է:

Մեր ժեշտը Աստծո վրա թանկ չի նստում,
իսկ պարունակությունը հստակ բնորոշում չունի,
հատկապես, երբ...
հաաաաա... փչյու:

Ավանգարդ* ոճի մեջ նայվող քիթ,
վերածննդի շրջանի քիթիկ,
հեղափոխական կարմիր քիթ,
այնուամենայնիվ, քնքուշ քիթիկ:

Նրանց միջև առկա գերհաղորդականությունը*
ամենակենցաղային իմաստով շոշափելի է դառնում,
երբ քաղաքի տարբեր ծայրերում
միաժամանակ վերջանում է անձեռոցիկը:

Քթի շարունակությունն իրեն զգում է ինչպես
8-րդ հարկի լվացքի թոկից ընկած կիսաթաց սվիտր,
կարևորն այն է, որ դեռևս զգում է
(քիթիկները սովորաբար ավելի լավատես են լինում):

- Քիթն ու քիթիկը գրիպից չեն մեռնի, չէ՞
(չնայած կարելի էր մեռնել անժամանակ և ողբերգական):
- Չէէ՛, նոր բան մտածի,
դա նախանցյալ անգամ փորձեցինք,
չե՞ս հիշում,
և հետո, զգույշ, մեր գիրը նաև թուղթ ու գիր է:

Հաաափչյու...
էդքան էլ ճիշտ:

ՏԱՔ ՊԱՀԻ, ԿԱՆՑՆԻ

Ես, Նա և փետրվարը
ձեռքներս ծնկներիս լռին նստել էինք
փայտե ճաղերով նստարանին,
ու մեր աննպատակ հայացքները
հեռվում իրար էր խճճում
սառցադաշտի վերջին հաճախորդը:

(Սառը ջրի տակ լվալուց հետո
թավշյա դեղձի սառը դեղձագույնը
միշտ բնազդորեն համբուրում եմ
կծելուց առաջ):

- Էհ, անմեղության փնտրտուքի ճանապարհին
ինչքա՜ն անմեղություն ես վարի տվել,
ա՛յ ծովախոզ...

Ըհը... դրանից ուշ տարիքում առաջանում են
դեպի ներքև ցույց տվող սլաք՝ հոնքերի միջև,
և ծակոցներ հոգու խորքի շրջանում:

Դառնությունը նստեց աաայ այնտեղ,
այն անկյունում:
Սկզբում քիթն էր քչփորում,
հետո ծխախոտ վառեց:
Գիշերվա կեսին թևս ընկավ ու գնացինք արաղի,
հետս հավասար խմեց:
Երբ ուզեցի երգենք, ոչ մի երգ չգիտեր:
Աչքս թարթեցի՝ վրայիցս հանեց
շղթաս, գոտիս, կոշկաթելերս
(այն ամենը, ինչով իբր թե
կարելի էր կախվել):
Թքեցի դեմքին... ժպտաց:
Ավելի պինդ գրկեց ու քայլեցինք դեպի կամուրջը,
ուր... թարսի պես...

Իսկ ես... դեղձ շատ եմ սիրում,
դեղձի հոտից մեջս
տուն-տունիկ խաղալու կիրք է զարթնում:
Սկսում եմ փողոցում սրա-նրա երեխաներին

պոնչո անել:
- Հերիք է գլուխս տանես, ա՛յ փռչոտ:
Քեզ նոր չէ, որ ճանաչում եմ.
դեռ ինչքա՞ն պիտի գտնեմ քեզ լուսաբացին
փողոցներում՝ հարբած ու փնթի...
բո՛մժ:

(Նորից գարուն կլինի անտաշատում
և իշամեղուն նորից մինչև ականջները
դեղձենու անմեղորեն քնքուշ ծաղկափոշում կթաթախվի):

Բացի՛ր աչքերդ,
վարագույրներդ,
լուսամուտներդ...

ԳՈՐԾ № 2110-08

Սերը քացով խփեց այնտեղիս,
որտեղից ենթադրվում էր իմ շարունակելիությունը,
արմունկով իջավ արևահյուսակիս,
բռունցքով՝ ձախ աչքիս,
ընկա,
ապակու կտորով քերեց երակներս...

Ծարունակությունն ականատեսների վկայությամբ.

«Երեկ գիշեր իրավապահները անսթափ վիճակում
մինչ այդ անհայտ «անտաշատ» կոչվող բնակավայրից
բերման են ենթարկել...
Առգրավվել են օրինազանցի
սպիտակ ձին և ակորդեոնը»:

Երբ էն աշխարհում աչքերս բացեցի,
արդեն ավարտել էին ուղեղիս լվացումն ու պարզաջրումը,
[24] հետս էին դրել մի ամբողջ քերովբե*,
և դու մի ասա, մենք արդեն 25 տարի է
հետդարձի ճանապարհին ենք:

Անապատներ, լեռներ, ծովեր.
իրար ձրի սիրելու լիիիքը տեղ:

Հոգեմարմնական ապրումների
կենսաբանորեն անհրաժեշտ նվազագույնը մի կողմ՝
օրը 24 անգամ նրա առկայությունն էի ստուգում,
տարին 12 անգամ փորձարկում թափանցելիությունը -
հնազանդ էր:

Օգոստոսին
հանկարծ
հիշեցի ազգանունս,
արտաշնչեցի ածխաթթու գազ,
ձախ աչքս սկսեց տեսնել,
արնահոսությունը դադարեց:

Իսկ հաջորդ օրը նա
միանգամայն անտեղի դեմքի արտահայտությամբ

ասաց.
- Ինձ լսիր, այ՛ցմահ և հետմահու հետիոտն,
հերիք է գիշերները թևերիս փետուրները խուզես
ինքդ քեզնից թաքուն.
արթնացի՛ր, էլի, դու հո մազոխի՞ստ* չես...
.....
Երբ ձմերուկի վրա աչքեր փորեցինք,
արտասվեց:
- Այսօր լավ օր է բաժանման համար, - ասացիր...
և ես շտապեցի շնչել մազերիդ բույրն ու մտապահել.
ամեն դեպքում մեկ-մեկ խելագարվելու չափ
այս երգն անունի կարիք է զգում:

ԻՄ (առայժմ) ՑԱՎԸ կամ ՄԻ՛ ԾՆԱՆԱՐ

Ատամներիս տակ հազիվ ճզմելով ոռնոցը՝
ես քեզ ժպտացի վերջին անգամ՝
ձևացնելով, որ կարող եմ լինել
մեծ և սուրբ... (բայց կուտը չկերար):

Եվ հիստերիկ ջղաձգումից բռունցքված ձեռքս
շտապով թաքցրեցի գրպանում՝
պարտակելով քեզ համար նախատեսված ապտակը
(դրանից աչքիս մեջ մազանոթ պայթեց):

Ես ուզում էի ողբերգական խորհրդավորություն տալ
մեր այդ ոչ հերթական բաժանմանը՝
բանաձևելով
«Քո տեղն իմ կյանքում դատարկ կմնա...» կարգի
սրտաճմլիկ մտքեր՝
գոնե մի մարդավարի տառապանք
քեզնից տանելու հույսով:

[26]

Իսկ դու ակնհայտորեն անհանգիստ էիր,
ինչպես կարելի էր ենթադրել բիբերիդ լայնությունից -
խոսումնալից հանդիպումից էիր ուշանում:

Գոնե այդքան գեղեցիկ չլինեիր այդ օրը
և չբուրեիր, ինչպես (երևի) ծովը
խաղաղ կեսգիշերին:

Վերջում դիմեցի դասական հնարքի.
-Փախչե՛նք...
(չհասցրեցի ավելացնել՝ անտաշատ)
...սեթևեթ ժպտացիր և աչքի ծայրով
նայեցիր ժամացույցին - հասկացա -
հնաոճ եմ,
և վրայիցս շան հոտ է գալիս
(լավ իմաստով).

ծանր եմ տանում Տիրոջս փոխելու միտքը:

ԳԱՐՈՒՆՔԱՑԱՎ

Սերը երկար մազեր ունի, փափուկ է...
Եթե աչքերս փակեմ ու կենտրոնանամ,
նույնիսկ կհիշեմ աչքերի գույնն ու... մնացածը:

Սերը տարիներով կարող է զգեստը չփոխել՝
հատկապես էն բաց-կապտամոխրագույնը՝
մանր սպիտակ ծաղիկներով:

Սիրո մասին միշտ գարունից թաքուն եմ մտածում,
որ հանկարծ գարունը չառիթավորվի:

Եվ ամեն անգամ, երբ լսում եմ "L'histoire d'un Amour"-ը*,
սերը քնքուշ գրկում է մեջքիցս և կծում աջ ականջս:

Սերը... երեք ամիսը մեկ... քսանհինգ րոպե
կրծքամկանի սպազմատիկ* կծկումներ,
որից չեն մեռնում:

Եվ ինչպես Սիրո մասին աշխարհի բոլոր
պատմություններում,
ինչպես աշխարհի մնացած բոլոր սերերը,
Սերն էլ եսիմ քանի տարի առաջ
ամուսնացել է հարուստ սփյուռքահայի հետ
և մեկնել այս երգից հեռու՛... հեռու՛... հեռու՛...

(Փողոցներում լիքն են իր նմանները:
Փառք Աստծո, որ ինքը չկա):

ԿՈԿՏԵՅԼ՝ ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ԼՈՒՍԻՆ

- լվացքի փոշի առնել,
- Անուլիկին տանել մանկապարտեզ,
- ուրց ուզել մամայից,
- ծաղկամանների հողը փոխել,
- յոգայի պարապմունքը հետաձգել:

Ուզում եմ հիշել,
թե երբ եմ վերջին անգամ լավ սիրահարվել...
27-ում... հա՛-հա՛, եղել է այդպիսի բան:
Ափսոսամ-չափսոսամ՝ չգիտեմ...
Չի մեռել... չասաց՝ բաժանվիր, ես էլ չասացի,
որ այդ մի բառին եմ սպասում: Գնաց:

Իսկ այժմ և միշտ...
հումանիզմն* ավանդույթ է մեր քարանձավում.
որսորդության մեջ էդքան չկանք իհարկե,
բայց հո՞ խորոված չենք անում...
[28] չէ՞, ամուսնյա՛կ:

Բայց էս ինչ մեծ կարծիքի ես իմ մասին, ա՛յ մարդ.
«կինը տղամարդու ինքնագնահատականն է...»:
Վերմակի տակ ռեժիմում
արդեն 10 տարի է մամա-պապա ենք խաղում:
Մի անգամ դեմքիս նայիր,
ասա՝ ծերացել ես,
ասա՝ զզվում եմ քեզանից,
ասա՝ կյանքս կերար,
ներվայնացիր, խփիր...

«Հազիվ մի տունուտեղի ստեղծման համար հերիքող կյանք»
խորագրի ներքո շարունակում ես բողոքել
համաշխարհային ճգնաժամից*:

- Մենք հեչ... բա երեխե՞քը... (շփման եզր է փնտրում):

(Սիրո ցամաքած ծովից մնացած աղի անապատներ
և աղ դրած մատղաշ ասպետներ՝ Սբ. Սարգսի* տոնին -
իսկ կյանքի գլխավոր դերում հայտնվել ցանկացող
անկողինը

«վարդերի հեղափոխություն»* է անում
հատկապես փետրվարի վերջին շաբաթը:
Դիմացի շենքի պատուհանից թաքուն ծիկրակող
ջահելի համար
իբր մոռանում է մինչև վերջ քաշել վարագույրը
ու մի տեսակ դանդաղ, մի տեսակ ավելի է մերկանում):

Նայում եմ հայելու մեջ, ծիծաղս գալիս է.
սովետական երկաթբետոն՝ եվրոլուսամուտներով:
Հա՛, ինչ, դուռը կխփեմ, կբացի, կասեմ...
(Տանտրայի* ձեռնարկը ձեռքին մտնում է նրա ննջասենյակը
ու կանացի շանտաժի «սրանի՛ց եմ ուզում» հայացքով
ցուցամատը դնում 55-րդ էջի նկարին):
- Սուրճդ խմի, Լու՛ս, սուրճդ... սառեց... ու քիչ կինո նայիր:

Գարունը 50 դրամանոց դեղին ծաղիկների փունջ է՝
փողոցներում թափած, գնում է շան ոտքի հետ,
միայն թե համարձակությունդ հերիքեց՝ առար...
(չէ՞, քաղաքը փոքր է, դեղինն էլ աչք է ծակում):

Լվացք, շեյփինգ, յոգա, չաթ*, չաթ, ընթրիք, լվացք:
- Ինձ անկողին պետք չի, ինձ սեր պետք չի
(մանավանդ՝ տղամարդկանց հարցում
բախտս երբեք էլ չի բերել),
ինձ շատ-շատ...
չորաթանի բաղադրատոմսն է պետք:

(Բայց, այնուամենայնիվ, մեկ-մեկ,
երբ տանը մարդ չի լինում,
հավաքում է 000-000-001
ու գոռում հեռախոսի մեջ.
- Հե՜յ, գարո՛ւն, ո՞ւր ես, շտապի՛ր.
կես ժամ ժամանակ ունեմ):

ՔՅԱՖԹԱՌ ԵՎԱՅԻՆ

Կնստենք,
կլռենք երկար-բարակ, կարմիր-լաջվարդ
մտքերով կհասնենք մինչև
ի սկզբանե եղած բանի բանը:

Հեռվում կոտրատվող հորիզոնի հետևից
կվազեն մեր աչքերը՝ կառչած նեյրոններից*,
աստղաբույլերից, աստվածներից, քամիներից...
հավերժ փախստական և վտարանդի
մեր ճանապարհները
կխաչակնքվեն հեռվում.

Փրկության միակ ուղենիշն է
այժմ և միշտ և հավիտյանս -
ՀԵՌՈՒՆ:

Ոտքս զգուշորեն շոյող փեշիցդ
[30] արյանս մեջ
խելագար, ավերիչ փոթորիկներ կգալարվեն,
և ինձ մի պահ անկեղծորեն կթվա,
թե իբր չի դիմանա հագիս կավեղենը:

- Լսիր, իսկ դու որերո՞րդն ես,
և ու՞ր է այն սերը,
որ տևելու էր մի կյանքի չափ,
ուր է այն կյանքը,
որ... կյանք էր:
Չէէէ, դուք բոլորդ էլ իմ էէն կողից եք.
մեկին՝ մեկ,
դրա համար էլ հաշիվը չեմ պահում:

- Կրկնվելու գայթակղությունից խելքդ մաղած ծերուկ,
սեռդ հիշելու առիթը բաց չես թողնում:
Թիթի՛զ:

Սերը գրեթե տևում է մի կյանքի չափ:
Ուղղակի էն ստից մնացորդը թթվում է նյարդերիդ վրա,
երբ դրախտից մնացած պարտքերի տետրը թևի տակ՝

մի օր քո տուն է տեղափոխվում -
չնախատեսված երեխայի սպասող
չսիրված կին
ՈՒՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ։

Էէհ, ծանր մտքեր եկան,
Փեշդ քաշիր, Ե՛վ։

ՍԻ-ԲԵՄՈԼ ՄԻՆՈՐ*

Ես սիրում եմ
լքված ու կիսաքանդ շինություններ,
որտեղ ապրել են լրիվ անկարևոր մարդիկ,
սրտաճմլիկ բաժանումներ,
հոկտեմբերի վերջին շաբաթը,
գլխավոր պողոտայի վրա աննպատակ աճող,
բայց պարտաճանաչորեն բերրի կաղնիները,
պոեզիա,
կենսաբանության դասատուներին,
կարմիր լոբով ապուր,
Մարքսի «Կապիտալի»* հոտը և
ռետրո բեղերով պապերիս սև-սպիտակ անցյալը,
առաջին իսկ գողության վրա բռնվողներին,
պառավ ամուսինների մանրախնդիր
և ինքնանպատակ վեճերը,
կակտուսներ,
մարմնավաճառների շաբլոն պատմությունները
[32] «մինչ և հետո» ձևաչափով,
ծիծեռնակների գալու հաջորդ երկու օրերը,
շաաատ հեռավոր բարեկամներիս,
վերջին հազարանոցի առաջին 500-ը,
քննարկումներ Աստծո գոյության և աշխարհի վերջի շուրջ,
պառաված օրիորդների անփորձ ակնարկներն
ու ողբերգական հպարտությունը,
հոնի արաղ,
անցանկալի մազածածկույթի դեմ
կանանց պայքարի լրջությունը,
սնափառությունից ուշաթափվելու վրա
մարդկանց բռնացնելը,
ընդհանրապես ինչ-որ «մեղսագործման» վրա
բռնացնելն ու չմատնելը,
ձևի համար հավաքված գրադարանները,
աշխարհը մայրիշխանության ժամանակներում
պատկերացնելը,
բալոտ շրթունքներ, բալի հետ կապված ամեն ինչ,
տատիս տեսակ-տեսակ կանաչիների բոստանը,
ժայռապատկերներ,
հորինովի պատմություններ՝
հատկապես այն, որ ծնվել եմ 11-րդ ամսում,

իսկ 13 տարեկանում 2 մետր փոս եմ փորել՝
դինոզավրի կմախք գտնելու հույսով,
պեղումներ,
որոշ տեսակի կանանց և մի քանի տղամարդու,
բանալիների խրձեր, կանաչ խնձոր,
Վանա լիճը*,
«բարուրաշոր» և «հոգեթել» բառերը,
երիտասարդ մայրիկների թթվածնով հարուստ
հասունությունը,
Է տառը,
իսկ ԱՄԵՆԱԾԱՏԸ՝
պոեզիան ավարտելու
3-րդից մինչ 18-րդ րոպեները:

ՀԱԿԼԱԿՈՆԾԻ

(Փիսո, լուսնի վրա
երկու հեկտար հող կառնեմ քեզ համար,
միայն թե շրջվիր
տեսնեմ՝
որքանով է դեմքդ նման
նրա մասին իմ պատկերացումներին):

ՎԱՅ...

Մետրոյի լուսամուտի
և «Օշոյի զրույցները»* ճոխ հատորի միջև
փիսոյի աղեկտուր ճիչով
ճզմված քնակոլոլ մեղուն
մեր անտերուդուս քաղաքում
ավետեց գարնան գալուստը,
և վերջին վագոնի 12 կանայք
ու ես
[34] սարսափով նկատեցինք.

«Եթե հաջորդ կայարանում պարզվի,
որ աշխարհի մեզ հասանելի հատվածում
ամբողջ մարդկությունը բնաջնջվել է,
ապա մարդկության շարունակման
միակ հույսը
Ես եմ...»:

Թու-թու-թու.
ես ինձ երբեք
ավելի տկլոր ու ինչորպիսին
չէի զգացել:

Կարեն Անտաշյան

անտաշաս. պոեզիա 78%

զրո

www.antashat.com

Քանի որ կանկայած խաղ նախ եւ առազ գործընթաց է, այսինքն՝ իրադարձությունների մեկ կամ չյուղավորված ժամանակային շղթա, ապա կարելի է վասել «խաղի ասոմը»: Սա խաղի ամենասարրական, անբաժանելի հասվածն է՝ **նվազագույն խաղարկային իրավիճակը**: Խաղի կանոններից եւ խաղարկային դրությունից կախված, նրա իրացումը ամեն դեպքում կհանգեցնի ամենաքիչը եւս մեկ պատասխան գործողության (քայլի) հակառակորդի կողմից: Երբ նվազագույն խաղարկային իրավիճակները սպառվում են, խաղն ավարտվում է:

«Խաղերի եւ տնտեսական վարքի տեսություն»,
Ջոն ֆոն Նեյման, Օսկար Մորգենշտեռն, 1944թ.

ՍԿԶԲՆԱԽԱՂ

Ի սկզբանե
(կարելի է ասել՝ հաշված վայրկյաններ անց),
վերջն անխուսափելի դարձավ։
Նա գոյանալու համար դարձավ Կա և Չկա,
(ասա ինչի՞դ էր պետք)։

Օրն իմաստավորեց կարճաժամկետ հեռանկարը,
իսկ գիշերը՝ վաստակած հանգիստ,
շարունակության մասին ահավոր հաճելի
մտորումներից և շոշափումներից հետո։

Եվ կարևորվեց ընթացքը,
որ պիտի ձևակերպվեր
ժամանակի ու տարածության կոնկրետությամբ,
օրենքներով, կանոններով, սկզբունքներով,
հնարավորինս լուրջ դեմքի արտահայտությամբ,
հարմար ու տպավորիչ ընտրված հանդերձանքով,
ցլի պոզերով, առյուծի գլխով և արծվի թևերով,
դափնիներով, մեդալներով, կախաղաններով,
վախեցնելով, սիրաշահելով, ոգևորելով,
փետրազարդելով ու սրբագործելով,
դատապարտելով ու պարգևատրելով,
բարդացնելով, խճճելով, ձգձգելով,
հնարավորինս կարևոր դարձնելով
ու ծիսակարգի վերածելով
ընթացքը։

Այն օրվանից, երբ կարևորն ընթացքն է,
կաթնասունները դրսևորում են
ընդգծված խաղամոլություն։

Խաղը միշտ հնարավոր է սկսել սկզբից։
Խաղը ցրում է իրական վերջի մասին ծանր մտքերը։
Դու դրանով զբաղված կլինես
այս գիշեր և վաղը ցերեկը
ու էլի ինչ-որ մի 42 տարի,
իսկ այդ ամբողջ ընթացքում
ենթատեքստում միշտ կենթադրվի,
որ այս ամենն, այնուամենայնիվ, ինչ-որ իմաստ ունի։

Կոմբինացիա* № 1 «Տուն-տունիկ»

Նա երեխաներից չսկսեց.
էդքան ներվեր չուներ:
Երեխաները դրախտից հետո եղան:
Երեսով տալու առիթը բաց չթողնելով՝
նրանք մերն են, մերն են, մե՛րն են
ու կարող են խաղալ այն ամենով,
ինչ մենք արեցինք այս աշխարհի հետ
և դեռ էլի ենք պատրաստվում անել:

Այն, ինչ մենք կռիվ տարանք հետներս
և այն, ինչ տուն բերեցինք կռվից...
Խաղալիքներ դարձած
մեր անհաջողությունների արդարացման ճիգը
գոյի ընդվզումը փորձում է վերածել համակերպումի՝
դաստիարակությամբ ու վարժեցումով,
որպեսզի շարունակվի էգոն,
զի ոչինչ այնպես քնքշորեն չի շոյում սնափառության ներվը,
[38] ինչպես ինչ-որ մեկի՝ քեզ նմանվելու հուսահատ ճիգը:

Բայց երբեմն նրանք, նրանցից անդաստիարակները,
խաղում են մեր աստվածների մազերի հետ, քաշքշում բեղերից,
ինչի համար և անհապաղ պատժում ենք,
սակայն արդեն ուշ է լինում.
ու նրանք մեզ նման են միայն... մասամբ:

Երեխաները խաղում են, որովհետև մեզ այդպես է թվում:

Հա, նրանք համառորեն շարունակում են խաղալ
մեր մեղքերի հատուցումն ու շարունակությունը,
զի գենը* 25 տարվա մեջ 1.3 սմ արագությամբ
ձգտում է մերձենալ Նրան:

Ճուտիկները զարմանալիորեն քաղցրակեր են:
Ինքնամոռաց զվարճությունը շաքարաքլորի առաջին շերտն է,
իսկ հաղթանակի գայթակղությունն ու պարտության թույնը
սեռահասունության առաջին հորմոնները*:
Եվ... շարունակությունը միշտ հետևում է:
Թո՛ւ... առջևում է:

Կոմբինացիա № 2 «Պատերազմի ծոռները»

Եվ նրանք բազմացան՝
նախատեսվածից ավելի խանդավառ ընդունելով
այդ գաղափարի իրացման ընթացքը:
Բնակեցրին աստվածային տնտեսության
բոլոր հնարավոր վայրիվերումները՝
իբրև աշխարհը գրավելու մեկնակետ՝
փորփրելով միլիոնավոր տիեզերակենտրոն որջեր:

Աշխարհը գրավելու ցանկությունից
քոր եկող ձեռքեր, լայնացած բիբեր,
պայթող սրտեր, կտրվող շնչառություն...

Դու գիտես,
որ աշխարհի բոլոր քարանձավների պատերին
նկարված են միայն հաղթողներ ու պարտվողներ:

Մենք մերոնցով ենք, խոստովանի՛ր,
քանի՞ անգամ է մտքովդ անցել:

Ա պատերազմի ծոռները կսկսեն պատերազմ Բ-ն,
Ա պատերազմի ծոռները կնահատակվեն,
Բ պատերազմի զավակները կփառաբանեն նրանց,
Բ պատերազմի թոռները կմոռանան,
Բ պատերազմի ծոռները կսկսեն պատերազմ Գ-ն:

Պատերազմը...

Ռազմի աստվածը վերջինն է մեռնում...
Պարտվածները աստված չունեն...
Հաղթանակը հեշտանքի չափ կարճ է տևում,
որպեսզի խաղը հասցնի վերարտադրել ինքն իրեն:

Պատերազմը... երբեք չի ավարտվելու:

Խաղը սիրում է կրկնել.
«Տե՛ղդ ճանաչիր:
Ո՞վ ես դու... հաղթանակած... պարտվող,
ո՞րն է քո պատերազմը,
գտի՛ր քեզ, շոշափի՛ր քեզ, սիրի՛ր քեզ,

ո՞րն է քո չափումը,
աստղերից այն կո՞ղմ, թե՞ Արևից այս կողմ,
ընտանիքի հայրի՞կ ես, թե՞ հայրենիքի զինվոր,
ցեղապե՞տ ես, թե՞ հերոս,
պոե՞տ ես, թե՞ դիոլչի,
թագավո՞ր ես, թե՞ ամեն դեպքում...»:

Պատերազմը քո ժառանգությունն է և քո կտակը
Ի սկզբանե և ի վերջո:

Կոմբինացիա № 3 «Թոկից փախածը»

Աշխարհը երբևէ անմնացորդ գրված Մեծիկների
երկնաքեր դամբարանաշարքը
աննկատ հասել է կոկորդիս:

[40] Երեկ էր, հա՛, 21:00-ի կողմերը,
ես ու Ալեքսանդրը քայլեցինք աշխարհի փողոցներով
և պարզեցինք իմ ու իր համար,
որ ոչ ոք հիմա Աստծուն դեմքով չի ճանաչում:

Խոստովանեմ, ինձ էլ է ժամանակին գայթակղել
խավարասերների անմնացորդ ու լկտի սերը կյանքի հանդեպ,
ես էլ եմ երբևէ ապրել
ոսկե մեդալների հնարավոր ծանրությունից
փաստացի կորամեջք:

Բայց քանի դեռ խաղը շարունակելի է
(անգամ երբ դու օրվա հերոսն ես)՝
մնացյալը կուտ է և... միևնույնն է:

Դու ընդամենը
եսիմինչի սպասման հերթում ծնված եսիմով,
ասենք՝ միջին օղակի ինչ-որ մենեջեր,
դու այդպես էլ կմեռնես՝
եսիմինչի մասին ենթադրություններիդ
ու եսիմինչի հանդիպման ականատեսը չդարձած:

Ու մինչ Աղոթքն ու Ճակատագիրը
միմյանց ձեռքից խլելով թերթում են կյանքիդ մնացորդները,
երջանկության փնտրտուքի հեռավոր ճանապարհներից
դու վերջապես տուն կվերադառնաս
միջինից ցածր եկամուտներով ու կիսաճաղատ:
Մի շաբաթվա մեջ կամուսնանաս
հարևանի տնական աղջկա հետ:
Հարսանեկան ավտոշարասյունը
հեզաճկուն կճախրի երկինքն ի վեր,
հետո ազատ անկման արագացումով*՝ երկիրն ի վար:

Կյանքիդ առաջին կեսը դու չես իմանա
արոտավայրում քեզ պահող թոկի ճշգրիտ չափը,
իսկ մի օր էլ, երբ որոշես չափել,
կպարզվի, որ այն ուղիղ կես մետր կարճ է...
անհրաժեշտից -
և այս աշխարհից խռովելու դեպքում
ուրիշ ոչ մի Փախչելու տեղ չի մնա
այն աշխարհից բացի:

Կոմբինացիա № 4 «Փրկիչը»

Բա՛րև, փոքրիկ... արի սրբեմ արցունքներդ:
Ու՞ր ես շտապում... հիմա ամեն տեղ էլ աշուն է:
Էլ չի ավարտվելու... ոչ մեկին չասես:
Ժամանակից վախենում են միայն մեռելները -
մեռելներից չես վախենում, չէ՞:

Գլուխդ դիր գրկիս... տաքը հաճելի է...

Ինչու՞ ես ինձ ասում արջուկ, երբ մրսած ես լինում:

Ի՞նչ կուտես: Լուսնին պակասող մա՛սը.
հաճելի՞ է... ինչ տաք է... տաք է... մի ցավեցրու:

Հասար ինձ... գտար ինձ... բա ու՞ր եմ ես...
180 աստիճան աջ՝
չկա,

180 աստիճանով առաջ՝
չկա։
Փոքրիկ, փոքրի՜կ,
հերիք է գլուխկոնծի տաս, կա՛նգ առ,
փակիր աչքերդ։
Ի՞նչ տարբերություն՝ ե՞ս, թե՞ դու։
Ի՞նչ տարբերություն՝ ե՞ս, թե՞ Աստված։

Ես ճախրել եմ այնքան, մինչ հասել ենք առաստաղին։
Առաստաղը կա... դու շոշափեցիր այն մեջքով։
Եվ չարժե վազել այն փախչողի հետևից,
ով վերադառնալու է վաղը չէ մյուս օրը
կամ էն մյուս.
նայած, թե երբ կհասնի սահմաններին...
քո և շարունակության։
Նա չի փախել։

Սպասի՛ր, իջեցրու՛ ատրճանակը քունքիցդ։
Կրակի՛ր։
Ծնչի՛ր։

[42]

Ինչո՞ւ ես ինձ ասում կապույտ, երբ օդը չի հերիքում։
Չես վախենում, չէ՞, մեռելներից։
Ծնչի՛ր ինձ... արտաշնչիր քեզ։

Հողագնդի բոլոր խոռոչներում ընտրություններ են.
լինել-չլինելու վրա խախտված տիեզերագիտություն
և դրանից անտեղյակ՝ Տիեզերք։
Իսկ դու հոգնել ես և ուզում ես հավատալ
անխուսափելիությանը։
Հավատա։

Ե՛Ս ԵՄ, ՈՐ ԿԱՄ։

Դու ուզում ես ինձ։
Մենք միշտ էլ թաքուն իմացել ենք դա։
Բոլորից թաքուն, երբ տանը մարդ չի եղել, չէ՞...

Ինչու՞ ես ծանր շնչում։

Ախ դու, վարդագույն կրունկներով իմ սպիտակ,

վրադ այդ ի՞նչ սև սուրճի հետքեր են։
Լսի՛ր, դա մեղքի գույնը չէ՞ր,
բայց դու արնահոսում ես և... սև է։

Ինչո՞ւ ես ինձ կոչում անձրև, երբ ծարավ ես լինում։

Կարո՞ղ ես 15 վայրկյան չշնչել ինձ համար։
Գոնե 9։
Ժպտա քեզ հայելու մեջ. հիմա ավելի նման ենք իրար։

Կոմբինացիա № 5 «Ինֆարկտ»*

Փետրվարի վերջին կամ նախավերջին օրը
առավոտյան 5:30-ին
(մեր նախորդ հանդիպման ճիշտ նույն ժամին)
քնած քաղաքի սառցե փողոցներից
սառը-երկնագույն ճռճռոցով
նա համրաքայլ կգա
ու կմտնի ներս:
Կարծելով թե քնած եմ՝
ձեռքը կերկարի սրտիս:
Հազիվ դիպած՝
կբռնեմ ձեռքը:
Կձևացնի, թե ծածկում էր:
Քնքուշ ու անխռով կժպտա.
- Ոնց կուզես...
Քնքուշ ու անխռով կժպտանք:

- Ես միշտ էլ իմացել եմ, որ դու նման ես պապիս հորը:

[44]

0°-ում անսպասելիորեն
հանում-գումարման և տառապանքի հավես չկա,
և վերջին հարցիս համար թողածդ վերջին ումպ թթվածինը
ես գերադասում եմ...
Լսի՛ր, ինչ փափու՞կ է չգերադասելը...
Ես քեզ վստահում եմ...

Տե՛ս,
անվերջուսկիզբ դանդաղկոտությամբ
և ծիծաղելով մեռնելու չափ շռայլ՝
ջրի երակները սառել են ապակուն:
Ծարունակելի ջուրը արևի սպասումով խաղաղ ննջում է
և ծիրանագույն երազներ է տեսնում գարնան մասին...

- Մինչ դու ընդամենը 78 %-ով ես ջրից:

Դե լավ,
որ քեզ չմոռանա հանկարծ,
քո ոճի մեջ մի բան խզբզիր լուսամուտի ճերմակ եղյամին,
ասենք՝ «հա՛, ի՞նչ կա որ» ու...
վերադառնանք:

Կարեն Անտաշյան

անտաշատ. պոեզիա 78%



ագռավաքար

www.antashat.com

Ուրբաթե ուրբաթ,- կ՚ասեն,-
Ձուր կը գա, կը կաթի եդ խարեն։
Կ՚ասեն՝ Միերի չիու զուրն է։
Ու ամեն չամփորդ՝ ուրբաթ օրեր
Կը լսի Քուռկիկ Ձալալու խրխնզոցն եդ խարեն։

[46]

«Սասունցի Դավիթ», հատված վերզերգիս,
1939թ. հրատ., Մ. Աբեղյան, Գ. Աբով, Ա. Ղանալանյան

ԱԳՌԱՎԱՔԱՐ*

(ազգային հոգեվերլուծության սեանս)

Ընտանիք - աթարին կպած սեր, մեղրալուսին, հիպերտոնիա*, անընդհատ շարունակելի վերջ:

Քար - պտղաբերության աստվածուհու վատ պահպանված մարմին, թարմ թխած հացի հոտ, հացը քիչ է, քարի մեջ արյուն կա:

Արծիվ – ժառանգական ճաղատություն, մարգարեական հեռատեսություն, կրծքավանդակի և ոտքերի առատ մազածածկույթը պատմականորեն ձևավորված իմունիտետ է քարանձավային մութուցրտի հանդեպ, խաբված լինելու անհաղթահարելի զգացողություն, անհուն հոգեմարմնական կապվածություն կարճատեսի ակնոցների հետ:

Գեն* – հյուրասենյակից խոհանոց, խոհանոցից նկուղ տեղափոխված մեռած մարդկանց նկարներ, խորոված միս, մոնղոլ-թաթարական արշավանքներ, կապույտ աչքերի և խարտյաշ մազերի ցեղական սպասում:

Տուն - վերադառնալու, թաքնվելու, մեռնելու ամենահարմար, ամենաանվտանգ, ամենատաք տեղը, հատկապես պատերազմից առաջ և պատերազմի ընթացքում:

Լեռ – ծովի բացակայություն:

Կարոտ - խոր աշնանային աչքեր, դուդուկի նվագ, ծիրանի չիր, կոտրված կարասի բռնակ:

Պատուհան – հարևանի մանկապատանեկան լվացք, Ծիծեռնակաբերդ*, 3-րդ պլան՝ Արարատ:

Արքա – Տիգրան Մեծի* մետաղադրամ, քանդակներ նարդու վրա, 20 տարվա կոնյակի անվանում:

Հերոս - Վաղինակ Ճպուռյանի օրգանիզմ + Սասունցի Դավթի* երևակայություն:

Սեր – ուտեմ քեզ, թաղեմ քեզ, չունենամ քեզ:

Ճակատագիր – Դուբլ N 4499. տեսարան «Ծննդոց», էպիզոդ «Բուռ ու կես ջուրը»... 3-4՝ գնա՛ց... թո՛ւռ... ամբողջական բուռը թափվում է հրմշտոցի մեջ, կես բուռը հասնում է ինչ-որ մեկին, ով կորչում է ամբոխում... հետո նրա ձեռքում է հայտնվում բարձրախոսը. «Մենք մեղք չունե՛նք... ջրհեղեղից էս կողմ անձրև չի՛ եկել»:

Ավանդույթ - սեփական յուղով տապակվելը 5-րդ անգամից հետո դառնում է անառողջ ապրելակերպի և ծերության նշան:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ
ճամփորդական նոթագրումներ

Օր I

Ուստեն փող էր տվել, որ իրեն տանեն
տատի պատմած Էրգիրը,
բայց նրան տարան ցույց տալու Թուրքիան՝
իր տուրիստական նշանակության ավերակներով:

Եվ չնայած ամեն 3 կիլոմետրի վրա
անալգին-դիմեդրոլային լուծույթով լցված սպռիչի պես
երկնքի քամակը կոխած մինարեթներին*՝
քրտնած, ջերմության ու դողէրոցքի մեջ վառվող Երկինքը
վերմակի տակից աչքով էր անում ուստին.
- Այ տղա Արա՜մ, ի՜նչ նման ես Նարոտ տատիդ:

Օր II

Հայրենիքը զոհաբերություն է՝
հանուն հպարտությունից կտրվող շնչառության -
[48] և 2-րդ կարգի արիության մեդալ՝ ձախ ոտքի դիմաց:
Հայրենիքի չարն ու բարին հերոսական են:
Պարտված հայրենիքը՝
խրամատների միջև ենթադրվող տիեզերական չոլ,
ուր ժամանակի հետ քարաքոսերն ուտում են
գլխատված Վահագնի* գլուխը:

Օր III

Մենք շարունակում ենք հավատալ մեր հերոսական կռվին,
իսկ այդ ընթացքում
պզուկոտ տարիքի մի սիրահարված թուրք
«Միերի դռան»* վրա կարմիրով գրում է
“Atatürk+Akgül=Sevmek”
և դաժանորեն անմեղ ժպտում աշխարհին:

Օր IV

Կռունկները հայրենիք չունեն:

Օր V

Հոգեթելերում նվվում են
տատից մնացած երգից մնացած

երեք տողերը,
բայց մոռացված տողերի մասին ենթադրություններն
ավելի հուզիչ են:

Օր VI
12:30
Ուստեն քաղցր է տալիս ուղեկցող թուրք պատանուն,
շոյում է գլուխը... ձեռքն ակամայից իջնում է ականջին...
խմած՝ մեկին խոստացել էր դրանցից...
Ծալովի դանակի շրթունքն անընդհատ քոր է գալիս
արյունոտվելու ցանկությունից,
բայց այդպես էլ մնում է դեղձ-մեղձ կտրելով
ինքնաբավարարվելու հույսին:

16:50
Քյարիմի երկնագույն աչքերի մեջ շարունակվող
Նանոր տատի անաստված մնացած երկինքը...
փշաքաղվեց:
Տնագոմի առաջին քարաշարքի խաչքարը չծախեց.
թիթիզության գեները մատնեցին.
նրան տաքացնում է այն միտքը, որ քարը 30 ոչխար արժե [49]
(Թանգյուլն արժեր 25...)

19:15
Թուրք սպասավորը ներս մտավ՝
մատուցարանի մեջ մեր գառան տաք մատաղը,
որին մորթել էր քուրդ մսագործը:
Հա՛, մենք վախեցել էինք արյունոտվելուց,
համ էլ ուստեն ասել էր.
«Աստծո համար մե՞կ չի՝ ով է մորթում»,
իսկ հիմա... ծամծմելով կուլ չգնացող միսը՝
մտածեց վարպետ մսագործի մասին.
«Դե լավ, համոզեցի՛ր, իմ փայ դրախտը՝ քեզ»:

20:08
Առաջին զանգը Երևան:

Օր VII
.....

ՀԱՐԵՎԱՆԻՍ
(կենցաղային անհանդուրժողականության շուրջ)

Զարթուցիչն առավոտյան ֆիքսում է նրա տեղը
սննդային շղթայի* մեջ:
(Զարմանալիորեն
ռազմական ոստիկանության
թոշակի անցած ենթասպաները
նույնպես կարևոր են կենսոլորտի* համար):

Իբրև սկիզբ
մի աչքով կառչած վայրկենացույցին՝
մյուսով կեսժպիտ ճախրում է անհորիզոն ծովում՝
ճերմակ առագաստներով նավը պաշարած
թռչնաձկների հետևից:
Ներշնչելով աղեբույրա-ձկնահամ սառը թթվածինը՝
ծխա-գինե-կարիեսային ընթրիքն է արտաշնչում:

Զարթուցիչը բզում է.
[50] «Անդո՛, հիշիր անունդ,
տարիքդ, ամիս/ամսաթիվը, աշխատավարձիդ օրը,
երջանիկ կամ դժբախտ լինելու պատճառներդ,
օրգանիզմիդ յուղոտվածության, քրտնածության,
թեփոտվածության և մազակալածության աստիճանը,
երկրիդ պետական կրոնը,
կողքիդ 38 տարի մեռած և մեռնել շարունակողի
քնքշանունը:

Ճուտի՞կ, ձուկի՞կ, փիսի՞կ, խոզու՞կ...
- Հա՛, էսօր երևի խոզուկ:

(Ինքնախաբեության ամեն մի չհաջողված ակտ
թաքուն ավելացվում է խմելու առիթների ցանկում,
քանզի «խոզուկի» անցանկալի մազածածկույթը չի գցում
վերջինիս ցանկալի վայրերի
պատմականորեն գայթակղիչ հմայքը,
երբ Անդո ձյան խմած է լինում):

Եվ այսպես,
իր կարծիքով ոչ մի կապ չունենալով
այն չոր վիճակագրությանը,

որ ընտրազանգվածը շարունակում է բթանալ
ժամում 1254 քվե արագությամբ,
ամեն մի սովորական, օրացուցային առավոտ,
երբ առանձնապես չես տառապում
տեսակի պահպանության և բազմանալու
անհրաժեշտությունից,
երկրի հետ բախվել պատրաստվող երկնաքարերի
և չափից դուրս հողատարածք զբաղեցնող
գերեզմանոցների շուրջ սարքվող աղմուկից,
հեռու...
հեռվանց հեռու,
անհաղորդակից
ինքն իր կյանքով ապրել շարունակող օրգանիզմի
և իր չտեսած ծովի լազուրում թափառող հոգու
արտամամուսնական կապին,
ծուլորեն... անդրշիրիմյան...
հետմահու անշտապողականությամբ,
ավերակներ հիշեցնող իր անկողնում թավալվելով՝
նա համոզված է,
որ մի պատ այն կողմ
ես ավելի երջանիկ եմ,
քան ինքը:

ՎԵՐԵՎՆ ԱՍՏՎԱԾ ԿԱ

Մորս աղոթքներով
եղբորս գործի ենք տեղավորում,
ինձ ազատում, տանում ենք ավելի լավ գործի:

Մորս աղոթքները
պաշտպանում են մեզ չար աչքից, չար մտքից,
չար խոսքից, չար գործից,
վատ մտքերով վատ աղջիկներից
(լավ էլի, մա՛մ):

Մորս աղոթքները
օգնում են, որ «էս նոր» վիրուսներից չընկնենք,
եթե ընկնենք էլ, շատ չտանջվենք,
եթե մի թեթև տանջվենք էլ՝ դառնանք Բուդդա*:

Մորս աղոթքներով
մենք ամեն օր ոչ թե գործից տուն ենք գալիս,
[52] այլ տուն ենք վերադառնում
աններելի և անմարդկային հեռուներից:

Մորս աղոթքները
միջնորդում են, որ մեզ բանակ չտանեն,
եթե տանեն էլ՝ կռիվ չլինի,
եթե լինի էլ... թուրքի գնդակն անցնի 15 սմ-ի վրա:
(կներես, էս մեկի մասին չէի պատմել, մա՛):

Մորս աղոթքները
օգնում են, որ կապույտ մոլորակի նավթը չվերջանա,
Երկրի հետ բախվել սպառնացող երկնաքարերը
շրջանցեն այն,
Արևի վրա ջրածինը շարունակի լույս դառնալ
գոնե առաջիկա 45 տարում:

Ի՞նչ ես պապանձվել,
պատուհանից դուրս նայիր,
կամ միացրու վերջին լուրերն ու տես,
որ մորս աղոթքներն իրոք Տեղ են հասնում.
ուրեմն... «Վերևն Աստված կա»:

ՊԱՊԵՆԱԿԱՆ ԳԼԽԱՑԱՎ

Պապիցս երկու հեքիաթ է մնացել,
(մեկի սկիզբն եմ հիշում, մյուսի՝ վերջը)
ու այս անտերուդուս գլխացավը:

Այն հաստատ ինչ-որ մութ կապ ունի
աստղերի դիրքի ու նման բաների հետ:
Սկսվում է մեկ էլ գիշերվա կեսին.
նա
ինձ շալակած դուրս է հանում տնից՝
հիմնականում ոտքերիցս բռնած,
ու քարշ տալով տանում՝
գլուխս քարերին խփելով,
դուրս է հանում թաղից, քաղաքից, մոլորակից...
ու տանում, տանում, տանում է:
Լռին, կորամեջք, համբերատար,
առանց ծպտուն հանելու,
առանց ծանոթներին բարևելու,
առանց ծխելու համար դադարների,
տանում է ծուռտիկ-մուռտիկ
սարի ճամփեքով վեր,
սարի ճամփեքով վար...
- Տե՛ս, տե՛ս ջահել,
էս իմ սարքած աղբյուրն է,
էս իմ պատած վանքն է,
էս իմ կառուցած տներն են,
էս իմ շինած գերեզմաններն են...
- Պա՛պ, ա՛յ պապ,
գիտեմ, հիշում եմ, կանգնիր,
մենակ եմ հետ դառնալու,
մութ է...
.....
Առավոտյան հետ եմ վերադառնում
սուս ու փուս... հազար ու մի գործ կա... զզվել եմ,
մինչ նա իր հայրենի գյուղում թաղված է իր համար-
այնքան հեշտ, որ նախանձից ապրել չի լինում:

ՄԻՈՏՆՈՒԿՆԵՐ
ազգային-ազատագրական

***
Նաիրյան դալար բարդու-բարդու-բարդույթի
հաղթահարման մոտիվներով
սեքսուալ հեղափոխություն:

***
Երկնաքեր լեռների գագաթներից գլորվող,
դարերի մեջ խորխորատներ փորած
լեռնային գետակի պես...
ամեն գնով ջոկ-ջոկ ծովին հասնելու
զուտ հայկական մարմաջ:

***
Կհավաքվեն, կգոռգոռան,
քաջ տոհմի մասին երգը կերգեն...
կցրվեն տներով:

***
Մա՛րդ, որ թոքերիդ ամբողջ ծավալով երբևէ շնչած չկաս.
պատկերացնու՞մ ես, թե ինչքան թթվածին ես խնայել
մարդկության համար
և ինչքան դառը պատմություններ ու երգեր ավելացրել
կիսատության մասին:

***
Դու Խոզ ես. դու ծնվել ես բալետի համար:

***
Վարդագույն քաղաքի վրա մի մատ թոզ էր նստել:

***
Այստեղ փողոցներում մարդիկ այնպես են քայլում, ասես
(չգիտեմ ամոթխածությունից,
թե առավել տառապած թվալու համար)
ամբողջ աշխարհից ուզում են թաքցնել,
որ գիշերները քնում են իրար հետ:

***
Փոքրիկ մարդկային երջանկություն՝ ծվարած 8-րդ հարկում.
Արարատին նայող լուսամուտ, հեռուստացույց, դիվան,
Ծովինար անունով ոսկե ձուկ,
թաքուն ուրախություն, որ Եվրոպայում և ԱՄՆ-ում
հայ էմիգրանտների վիճակը հեչ լավ չի հիմա։

***
Ես հայ եմ։

ԷԱ. ՔԱՐԱՆՁԱՎԱԲՆԱԿ ԾՈՎԱՍՏՎԱԾ

Մինչ
բազմաթիվ կանանց և տղամարդկանց միջև
անընդմեջ
հեշտ սկսվող և դժվար ավարտվող
խառը պատմություններից անտեղյակ,
վաղորդյան խոնարհ արևածաղիկներից
դու կաթեցիր,
ցողի՞կ,
ու նարինջ դեղձենիների տակով անցար
վերջին անգամ քեզնով
կամ կյանքա-սերա-լույսախառը
լցնելով նախապապիս փորփրած
առվափոսերը:
Խունջիկ-մունջիկ անելով քարե վիշապիկների* հետ,
նրանց ողորկ կողերին քսմսվելով,
լկստվելով,
ինքնամոռաց,
[56] ալեծփիկ,
գալարվեցիր...
Մի օր էլ
հանկարծ
ալիքվեցիր
ինչ-որ տեղ Հնդկական օվկիանոսում՝
հեռավոր, անհուն, անանուն:

Ու մինչ քառորդ հավերժություն
խմորվում էր տիեզերքում դեռ անուն չունեցող
կարոտը,
ես խեցեղենից հինգ պարույր
հասակ առա քո խորքերում,
իսկ դու
չդիմացար, չսպասեցիր,
արևայրուքներից
ավանդեցիր հոգիդ արևաստծուն,
գալարվեցիր նրա հետ երկնային սավանների վրա,
խելակորույս թավալվեցիր նրա հետ՝
կյանքոտելով դեռևս անաստված
տարածություն ու ժամանակ,
Էա՛,

դու՝ ճերմակ առագաստանավ,
աղջիկ, կետադելֆին, ճայ,
երբևէ բառերի մեջ չառնված երգի կանխազգացում
Էա՛ -
ամպի՜կ,
կենսոլորտի* սահմանները պարագծող
թաց քնքշություն...
Աղջկական նազանքներով,
ինքդ քեզ շոյելով
ծուլորեն,
մշուշված ու քնատ
սահեցիր, սառեցիր,
գգվեցիր, գրկեցիր,
ննջեցիր,
հյուսիսային սուրբ լեռան գագաթին
իմ ծնունդից անհնարին շատ տարիներ առաջ,
սառցե ճերմակավոր ջրափոշի
Էա՛ -
Ձյունի՜կ:

Ես հիշում եմ քո այն երազը, [57]
որի անունը ջրաշուշան դրեցինք,
և դեռ երկնագույն էին այդ ժամանակ
ինձ պես ծովագռավները:

Հետո քո մենության
և իմ տունդարձի
ժամանիվը
գլորվեց,
գլորվեց...

Մինչ իմ սերմերը թրև էին գալիս անապատներով,
մինչ իմ սերմերը պարում էին թեթևսոլիկ քամիների հետ՝
անդրաշխարհի մթնում մոլորվելով
հետ չէին վերադառնում
կամ գալիս էին իբրև բարբարոս խառնածիններ՝
դու սուրբ լեռան գագաթից
կամացուկ,
կաթեկաթ,
շշուկով,
հորդեցիր

ինձ փնտրելու՝
քեզ խցկելով ամեն քարի ու դարի տակ՝
շոշափելով, հոտոտելով, լիզելով,
աշխարհում իմ գոյության աղակալած հետքերը,
իմ ժայռափոր մտքերը
ու դեռ չգտած իսկ արդեն սպասումի դողից
քառսուն պտկունքդ ակնախնձոր
ծորում էին կաթնահունց սիրո կենսահյութը,
Էա՛ -
անձրև։
Ես լսեցի քեզ.
«մի քիչ էլ մնա իմ մեջ, մի քիչ էլ...»։
Ես շնչեցի քեզ-ծովը։
Էա՛։
Այդ օրը ծնվեց առաջին երգը
քարանձավաբնակ
ծովապաշտների։

Կարեն Անտաշյան

անտաշաս. պոեզիա 78%

պոեզիաթերապիա

www.antashat.com

Իսկ երբ պոետներին համակում է ֆիշուբյան տենդը, նրանք համոզված են, որ ինքը՝ բնությունն է սիրահարվել իրենց:

Ես հոգնել եմ հին ու նոր պոետներից. չափազանց ծանծաղ են ինձ համար բոլոր այդ մանր-մունր ծովերը:

«Այսպես խոսեց Զրադաշտը. գիրք բոլորի եւ ոչ ոքի համար», 1883-1891թթ., Ֆրիդրիխ Նիցշե

[60]

«Գուրգուրեք պոետներին. մենք այնքան ժամանակ էինք համոզված, որ աշխարհում հսկա սուզահավեր դեռ շատ կան, մինչեւ որ նրանցից վերջինը վերացավ երկրի երեսից»:

«Վրիստոս», Գլ. 10, Պոեզիան եւ մարդկությունը, 95, 1964թ. Ջոն Ռոբերտ Ֆաուլզ

KRISIS*

Սև կավ, կարմիր արյուն։
Կյանքը սիրում է իրեն նայել կողքից։

Սև անձրև, կարմիր ձկներ։
Մահը համբուրվել է սովորում։

Սև ձի, կարմիր լուսին։
Կյանքը կրծում է եղունգները։

Սև աստղ, կարմիր երկինք։
Մահը նշան է բռնում ամբոխի վրա։

ՄԽԻԹԱՐՎԻՐ

Դեկտեմբերի կիսամերկ ծառերը
իրենց երերուն ոտիկներով -
անկումի հարվածն առաջինն են ընդունում
բարալիկ մատիկների վրա՝
մի կերպ գլխավերևում պահելով
երկնային ավերակների անդառնալին:

(Կարող է լինել կանխամտածված կամ պատահական):

- Դեռևս մի մարդաբոյ կա... մխիթարվի՛ր:

Կողպեքների բաժնում վաճառվում է
սեփականության իրավունք,
անվտանգություն, ապահովություն, վստահություն,
երկար տարիների երաշխիք.
այ... զենք և զինամթերք չի՛ վաճառվում:

[62] *(Պատվո սպանությունը ընտանիքի իգական սեռի անդամի սպանությունն է՝ ընտանիքը պատվազրկելու մեղադրանքով: Որպես պատվազրկում սովորաբար ենթադրվում է ամուսնական անհավատարմությունը):*

- Կարմիրի դոզան չի ուշանա... մխիթարվի՛ր:

Ատամհատիկիդ օրը դու ձեռքդ երկարեցիր ինձ,
իսկ ես կյանքումս առաջին անգամ
համարձակվեցի ճակատագրական լինել:
Թեկուզ ստվարաթղթե, այնուամենայնիվ, զինվոր,
քեզ համար մեռնելու մտքից շիկնելու ընդունակ,
շոշափելի, տեսանելի,
խրթխրթան ու ջերմամեկուսիչ գոյաձև,
որպիսիք անուշահոտ յուղերով,
մեղր ու պոպոքով օծվելուց հետո
ընտիր վառվում են լիալուսնի ֆոնին:

*(Որոշակի կրոնական արարողակարգով
զոհին կյանքից զրկելը
կոչվում է ծիսական սպանություն):*

- Սիրել նշանակում է՝ ուտել կամ կերված լինել... մխիթարվի՛ր:

Մինչև կոկորդը շինանյութի բիզնեսում խրված անտուններ,
որ արթնանում են աջ ոտքի վրա,
վախենում են վատ երազներից,
չշնանալու հաշվին փող են տնտեսում,
հաճույքով ուտում են հանապազօրյա լոբով ապուրը,
սիրային ոտանավորներ են անգիր անում,
հավատում են կարմիր վարդերի մոգությանը,
փորձում են ծխելը թողնել,
քվեարկում են իշխանության թեկնածուին,
2-րդը խմում են ընկերության կենացը,
վախենում են «դավաճանություն» բառից,
աղոթում են,
և չեն սպանում... ինչ էլ լինի, չեն սպանում:

(Կազմակերպված կոչվող սերիական մարդասպաններն ունեն զոհի հետապնդման և սպանության գործողությունների հստակ պլան):

[63]

- Ամեն ինչ անցողիկ է... մխիթարվի՛ր:

Փլվեց:
Տարօրինակ տաք է:
Միամիտ մի տարեկան ճնճղուկները
օդի մեջ ցնծությամբ որսում են
առաջին ձյան փարթամ փաթիլները:

Այսքա՜ն շատ կուտ ու ոչ մի կերպ կշտանալ չի լինում...

- Վերևները բնակեցված են կատակասերներով... դիմացի՛ր:

ՍՊԱՍՈՒՄ

Ինչ ազատ է օդը ջրհեղեղից առաջ,
ինչ թեթև է օդը ջրհեղեղից առաջ.
հատկապես այն մտքից,
որ հիմա ինչ-որ տեղ
իր առաքելությանը հավատարիմ մի Նոյ
աշխարհը փրկելու պատրաստություն է տեսնում,
և նրա ճակատագրական ցուցակներում դու չկաս՝
ինքնաոչնչացման ակնհայտ վարքագծով պոետոզավր:

Նախաջրհեղեղյան խոնավ մթան մեջ
թախիծը աղվամազոտ տառապյալներ է որսում,
քրտնած լուսամուտների հետևում
ժամսլաքի ուղղությամբ անշտապ մերսում
սկսնակ պոետների քունքերը՝
նրանց ականջներին տաքուկ փսփսալով
«Սեր» բառի բազմակի հոլովումներով
սրտաճմլիկ բաներ:

[64]

(Խուճապի մատնվելն այնքան հեշտ է-
մենք բոլորս այնքան վաղուց ենք սպասում,
որ արդեն մոռացել ենք՝ ինչի):

Մանուկ հասակում մարդկությանն այցելած
աշխարհի վերջի մասին սարսափելի երազները
դեռևս շարունակում են «բօ» անել
ամեն հարմար առիթով,
ամեն անձրևից առաջ... էհհ...
ջրհեղեղի վախից մեզ միայն ջրհեղեղը կփրկի,
որն ուշանում է:

Օրվա գյուտը.
մեդիտացիայի* համար ամենահարմար տեղը
ատամնաբույժի աթոռն է:

Անձրևի տակ մոռացված թվանոց դագաղի կափարիչը
անջրաթափանց է ու մեծամիտ:
Աղբահանության ոլորտում զբաղված մեկը
մթան մեջ դատարկ շշերը ձայնով տարբերելուց
մասնագիտական բերկրանք է ապրում:

Մարդավարի հղի մի Աստղիկ* հաշվարկում է,
որ այսքան թրջվելուց հետո հաստատ ջրհոս է ծնվելու։
Բազմահազար պատշգամբներում
գլխիվայր թառած չղջիկները
դանդաղ սկսում են ամանորյա բաստուրմայով լցնել
Սուրբ Ծննդյան անցուդարձն ու այս անգամ էլ,
ինքնասպանությունների դեմ պայքարի
միջազգային օրվա* առթիվ,
ջրհեղեղը հետաձգվում է անորոշ ժամանակով։

Սպասո՛ւմ ենք։

ԿԱՆԳԱՌ

Սպասում ենք։ Ծխում ենք։ Ամառ է։ [65]
(Աչքը անկուշտ է, աչքը ծակ է ու անկուշտ-
աչքը սիրում է վերևից բացվող,
կողքից կոտրատվելով անցնող
և քրտնած,
կիսախավարի մեջ հազիվ շոշափելի
տեսարանները)։
Սպասում ենք։ Ծխում ենք։ Ձմեռ է։
(Ամենամենակը, ամենաավելորդը,
ամենաանկապը վերջին վերարկուներն են
իրենց տերերից հետո)։
Սպասում ենք։ Ծխում ենք։ Գարուն է։
-Չե՞ս շոգում էդ ծանր վերարկուով։
Լռում ենք։
Ծխում ենք։
Նա հոր մահն է սգում,
իսկ ես գնում եմ դեկորատիվ նռան տնկի առնելու։

ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ ԿՅԱՆՔ
հիշողություններ պալատական նկարիչների խցից

Ամիսը մեկ անգամ մայրական կաթ,
մնացած ժամանակ՝
ըստ հայրենիքի հաստատած ճաշացանկի:

A4 ֆորմատի վրա երկնած սրտաճմլիկ գեղեցկություն՝
կես հացի, 2 ձվի, մեկ տուփ հալած պանրի
և 3 օրվա անվտանգության դիմաց:

Մոտավորապես բավարարում
շրթեշուրթ անցած ծխախոտով,
և սուրճանման մի բան առանց շաքարի:

Լրիվ կանոնադրական,
մոտավորապես խանդավառ դեմքի արտահայտություն՝
տասներորդ անքուն գիշերը չմատնելու համար (***երին)...

[66] Աչքից հեռու անիմաստ հառաչանքներ
ամսագրերի vip* գեղեցկուհիների թեմայով.
մոտավորապես տղամարդ մնալու մարմաջ:

Մոտավորապես ախպեր տղերք՝
սեղանակից, բաժակակից, անկողնակից ու բախտակից,
ում ստերին կարելի է անկեղծորեն հավատալ
և ում՝ անկեղծորեն խաբել՝
ինչ-որ տեղ լկտիաբար առանց մեզ շարունակվող
«իսկական» համարվող կյանքի մասին:

Իմ ստիպված ընկեր,
ես գիտեմ, որ վախենում ես նայել հայելու մեջ.
ա՛յ տղա, էնքան ես նիհարել,
որ շորերիդ կեղտն արդեն քսվում է հոգուդ:
Երբ դատարկենք էս մոտավորապես
(վայ տատի, ես քո քաշած...) արաղի շիշը,
կխոստովանեմ, որ... գիտեմ:

Լսի՛ր,
բոլորին սիրելն ամենամեծ մեղքն է, եթե Քրիստոսը* չես...

Իմ ճերմակավոր ընկեր,
մի օր, երբ քեզ ներեմ այս անդունդի հատակին
ինձ էլ՝ պարտված, կեղտոտ,
«ճ» կարգի կրտսեր սերժանտիս
սիրած լինելուդ համար,
ու մի օր, երբ դու ներես ինձ
Աստծուն հայհոյելիս քեզ տեսած լինելուս համար,
կնստենք, կխմենք իսկականից, մարդավարի,
կհարբենք իսկականից (իմ հաշվին)
և միմյանց ու Աստծուն խաբած չլինելու համար
լաց կլինենք իսկականից
մեր էս մոտավորապես ապրած ժամանակի...
կարոտից:

ԱՂՄՈՒԿ

Անտաշեն ամրոցի գծագրերը ծոցագրպանումս՝
շվշվացնելով ֆոֆռում եմ
այս անտեղի քաղաքի մազանոթներով:
Ինձ թվում է՝ զուգահեռաբար նրա Ա կետից Բ կետ
ինչ-որ բան եմ տեղափոխում...
Ինչ... տնտեսական ակտիվություն,
դե չգիտեմ... երևի
փող, շահագրգիռներ, քվե, գլխաքանակ, աղմուկ,
որ հեռվից տեսանելի ու լսելի դառնա՝
այստեղ բազմաթիվ մարդիկ են աղմկում,
այսինքն՝ այստեղ բազմաթիվ մարդիկ են ապրում:
Հա՛, ես սպառում եմ հայրենիքի արտադրած
հացն ու մածունը,
ես քաղաքական, տնտեսական և կրոնական սուբյեկտ եմ,
ես նպատակային լսարան եմ,
հսկայական ինստիտուտներ են աշխատում
ինձ զարմացնելու համար,
[68] ինձ ամեն քայլափոխի ամրապնդում են,
բոլոր օրենքներով - հրաշալի է.
չէ՞ որ ես ծերանում եմ հայրենիքի համար,
իմ անունը կա հայրենիքի բոլոր ցուցակներում,
և ամեն անգամ ինձ կորցնելիս ես շտապում եմ այնտեղ...

(Օրվա ճշմարտությունը՝
ամրոցս Բ կետի ֆոնին հե՛չ չէր նայվի):

Մենակյացի համար տարօրինակ չի՞
ամեն անգամ սեփական դռան զանգը խփելը:
Հատկապես, երբ հենց նոր ես գտել քեզ ցուցակում
ու սեփական աչքերով համոզվել՝
դու կաս:

Բայց ա՛յ ...
ծոցագրպանիդ շարունակելի առկայությունը
ամեն ինչ փչացնում է:

ԱԶՔԱՈՒԼՈՒՆՔՆԵՐ

***
Հո, հո, հոոոոո...
+37 C° մարդկային գոլորշին
և արևի մասին հիշողությունները
օգնում են հաղթահարել -42C° անմարդկային ձմեռը:

***
Ավելի քան ես... ավելի քան դու... մնաց 4 ամիս:

***
Երկու հայացք տիեզերական անհունի մեջ անհույս,
աստվածայինի և հավերժի գոյության նշույլներ
(այսինքն՝ միմյանց) որոնելուց հետո,
հանկարծ լրիվ պատահականորեն,
մայիսի առաջին երկուշաբթի կեսօրին,
մեծ թվերի օրենքով առաջին և վերջին անգամ
Օպերայի խաչմերուկում* դեմառդեմ են դուրս գալիս և...
ուշադրված «Անուշ»-ի անոնսի տակ գարնան կանչով
միմյանց անամոթաբար (բայց կրքոտ) սիրող թափառիկ
Զալոյին ու Սևոյին՝
անտարբեր անցնում են իրար կողքով և...
շարունակում փնտրել, փնտրել, փնտրել...

***
Եվ գալիս է այն պահը, երբ տեսակը որոշում է
չպահպանվել... ու նախաճաշին հրաժարվում է
օրակարգային ձվածեղից:

***
Բնությունը տղամարդու համար ստեղծել է փիլիսոփա
դառնալու անչափ բարենպաստ պայմաններ,
կամ ուր են քշում քեզ մտքերդ կանանցից հետո:

***
Ավելի շուտ 8:15 է, քան առավոտ:

***
Սիրտդ ուզեց... թուքդ կուլ տվեցիր... անցավ:

***
Սեր, սիրո բացակայություն, սիրո նման մի բան:

ԱՆԱՊԱՏ

(Ամենավերջում սատկեց Խուճուճ ուղտը:
Ես կկարոտեմ քեզ Խուուուճ... դավաճա՛ն Խուճ,
երկու ամիս էլ ձգեիր, կտեսնեիր տիրոջդ փառքը:
Հե՛յ, բայց դու ինչ գեշ աղջիկ կլինեիր,
քեզ չէին սիրի... վե՛ր կաց:
Ինձ մենակ թողեցիր անապատի հետ, Խո՛ւճ...):

«Քո ընտրությունը դեռևս քո ազատությունը չէ,
քո ընտրությունը հեռուն է,
ուր աշխարհի բոլոր ծեր ու ջահել ճանապարհները
մի օր դանդաղ սկսվում են լղոզվել իրար:
Ոտքերիդ տակ և հեռվում ենթադրվող
ինչ-որ ահավորության ավազե փեշերի միջև
անաղմուկ ճխլվում է
ութաձև հետագծերով քեզ հետևող անցյալը:

Սկսվում է:

Առաջին օրերին անապատը քեզ համար կհագնի այն գույնը,
որից դու վախենում ես ամենից շատ
ու վախենում ես, որովհետև ինքդ էլ կարմիր ես ներսից:

Դու, որ կյանքի և մահվան էարար կպչունությունը հերքեցիր,
որ զրոյից առաջ գոյություն ունեցած բաներ հիշես,
հիմա մի քանի վայրկյան փակիր աչքերդ,
ու թող քամին քշի այն, ինչ մնաց -
աղմուկ, բառեր, պայմանականություն:

Դու և քո աստվածն էլ չեք ամաչի իրարից
միմյանց գոյության համար:

Իսկ հետո, երբ թոքերիդ նստի
կարմիր ավազի հավերժությունը՝
դու կմնաս անուղի, անստվեր, անաստված, անէ...
Քեզ համար անապատն էլ չի ավարտվելու,
և դու կդառնաս նրա շարունակությունն
իրենից և քեզնից հետո,
մինչև որ մեկը հետաքրքրասիրությունից
գլխիվայր չշրջի

քո մարսած ճշմարտությունների
ավազը՝ ժամացույց:

(Քո ընտրությունը դեռ քո ազատությունը չէ.
ինչ էլ լինի, աչքերդ խնայիր, մարդ ես, էլի)»:

Մեհենագիր արձանագրություն /
անտաշատի մերձակայք, նախկին անապատ*

ՔՈ ՄԻՋԵՎ

Օրեցօր, օրըստօրե, օրնիբուն
փրկության ուղենիշ է դառնում Քո լույսի առավոտը:
Այն բոլոր նյարդիկները,
որ գիշերները ոռնալու չափ ցավոտ են,
միայն քո առավոտն է 50 գրամ սիրով բժշկում, Տե՛ր...

Ինձ էշի տեղ դրած՝
Քո արարած գիշերից փախչում եմ Քո արարած առավոտը,
ես Քեզնից փախչում եմ Քեզ մոտ
ու Քեզ օրհնելով քֆրտում եմ Քեզ:

Արյունդ, որ Սերն է, ես խմեցի ցմրուր,
ագահորեն,
մի շնչում
ու թվաց ինձ մի պահ,
որ ես դարձել եմ ԴՈՒ.
էս ինչ լավ է հնչում.
«ԵՍ ԴԱՐՁԵԼ ԵՄ Դ՛ՈՒ»,
և ե՛ս եմ Սերը... գոյական:

Հիմա խումհարի մեղսավոր ծանրության տակ
տնքում է անսեր մնացած արյանս ամեն մի կաթիլը,
ու ինչպես երկնքից ամեն դեպքում ընկնող ձյան փաթիլը,
ձևացնում եմ... պարում եմ... անկումս
Քո գիրկը:

ՄԻԱՄԻՏՔ
(թեմաներ մեդիտացիայի* համար)

***
Կյանքը գոյության տեղական նշանակության դրսևորում է:
***
Մարդուն մարդ է պետք, ծայրահեղ դեպքում՝ շուն:
***
Գնալով պակասում են այն առիթները,
երբ մարդիկ դիպչում են իրար:
***
Մարդիկ լռում են:
***
Միայնակ մարդիկ պետք է լավ սնվեն:
***
Ամբողջ աշխարհը բնակեցված է ուրիշ մարդկանցով:
***
Աշխարհում նեղվածք է հիմա. դեպի ներս եմ ապրում:
*** [73]
Փոս, փոսի բացակայություն, փոս:
***
Մահվանը կեսժպիտ աչքով անելու չափ հաճելիորեն դատարկ:
***
Ես էլ եմ սկիզբը աղոտ հիշում. ես էլ եմ շարունակությունից:
***
Աշխարհի վերջի հետ կապված պլաններս փոխում եմ:
***
Գոյը կտրտվում է հակագոյով:
***
Անգոյությունն ամբողջական է:
***
Ջուրը կհիշի բոլորիս:
***
Տիեզերքը համակերպվում է մեզ հետ.
ժամանակ է պետք:

ԿՅԱՆՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

Կապտա-մոխրագույն մոլորակի
միջինից ցածր եկամուտներով 2-րդ հանրապետության
12-րդ մայրաքաղաքի
3-րդ թաղամասի
1-ին փողոցի
26-րդ շենքի
3-րդ հարկի
54-րդ բնակարանի
միակ խոհանոցում
երկու մոծակ
մտմտում են մի շատ կարևոր գործի շուրջ.

- Սերը, ջա՛ն... ախր դա շա՜տ հեշտ բան է:
Այնքան հեշտ կսովորես,
որքան ծիծեռնակները սովորում են թռչել,
որքան ամպերն անձրևել են սովորում,
[74] որքան...
- Էէ՛hhh, Լյո՛վ, էսօր հեչ թռչելու հավես չկա...

(Մատչելի անհասանելիության պատրանքը
մտնում է խաղի կանոնների մեջ):

(Շարունակվելու համար կյանքը դիմում է
դերասանական էժան հնարքների):

- Լավ, էս հին երգ էր, բայց...
մոլորակն ինչու՞ է կապտա-մոխրագույն դարձել:

- Եսի՞մ... երևի սցենարով այդպես է:

- ՀՈՒՍՈՎ ԵՄ՝ ՍՑԵՆԱՐՈՎ Է ԱՅԴՊԵՍ:

ԱՇԽԱՐՀԸ ՓՐԿԵԼՈՒ ՓՈՐՁ
(ինչ անենք՝ ապարդյուն)

Աշնան վերջին օրը՝ որբ, անլվա ու մերկ -
Վերարկուի պես սերը գցեմ ուսին...

Աշնան վերջին օրը՝ գորշ, անթրաշ, սոված -
Հացի փողի նման սերը դնեմ ափին...

Աշնան վերջին օրը՝ տխուր, հուսալքված -
Էժան գինու նման սերը լցնեմ՝ խմի...

Աշնան վերջին օրը՝ լքված ու ինքնասպան -
Սերն ամեն դեպքում հետը ճամփեմ...

ԱՎԱՋԵ ՄԱՆԴԱԼՆԵՐ
ազատագրվիր ինքդ քեզնից

այնտեղ, ուր սերն է

***
Մինչև ականջախեցիները լռությամբ լեցուն
սենյակիս մեջ
ես լսում եմ՝ ինչպես են հեռավոր օվկիանոսի սև խորքերում
սեր անում երկնագույն կետերը*
ամեհի և քնքուշ ծվվոցներով,
և իմ մեջ թրթռում է ջուրը-սեր:

Սերը պարուրաձև ալիքներով ծավալում է տիեզերքը...
Երբևէ կարևոր եղած մարդկանց մահվան դիմակների վրա
կյանքը քթի տակ ժպտալով խաչակնքում է
կանաչ-կարմիր քարաքոսերով,
որ դեռևս հիշում են արևապաշտությունը:

***
Հանուն ծիսակարգի ես միշտ շիկնում եմ
քո մեջ մայր մտնելուց առաջ:
Մայրամուտի հավերժալույսի վերջին ճառագումի հետ
սահում է հայացքս հորիզոնի գծով՝
լիզելով հեռավոր լեռների գագաթները...
Երկնքոտ ամպերը մեղմ գալարվում են իմ շնչից,
ես շոշափում եմ օրվա մարող զարկերակը,
որ մահ չի գուժում բնավ,
այլ փափուկ ու քնքուշ զգուշությամբ տարրալուծում է
մենավոր ինքնորոշման մեջ տառապող
առանձնյակների կենսոլորտը*...
փակ աչքերով սիրուն տրվելու գիշերով:

***
Գլուխս պտտվեց Ծիր կաթինի* ուղղությամբ:
Դու աչքով արեցիր կարմիր ու տկլոր շշերի հետևից...
-Լսի՛ր, ի՞նչ ես անում այստեղ, սա ի՛մ երազն է...

շփոթից թափեցի ապրած օրերի աղը...
- Խա՛չ արա, խա՛չ արա... քանի վերևներում
չեն խառնել մեր մեղքերի հաշիվը:
Եվ ուշադիր եղիր քնելուց առաջ...
ես գիտեմ՝ հենց քնեցիր՝ սերը աղոտ մատներդ
թաքուն բերանն է տանելու էլի:

այնտեղ, ուր մարդիկ են ապրում

***
Կանգառային սիլի-բիլին
շարունակում է համեմել սպասումը
նրանց, ովքեր շտապում են
ու, մեկ է, չեն հասցնում ապրել
իրենց ժամանակը։
Էվոլյուցիան արագացման հակում ունի.
երևի հենց դո՛ւ էլ չես հասցնի
վայելել կրկնվելու հաճույքը։
Քո տեսակի մեջ վերջինն ես մնացել։
Շտապի՛ր...

***

Մեր ճանապարհներն ու մտքերը շրջագծված են
սոցիալական խավերի,
կարգավիճակների,
դրամական հոսքերի
ու կրկնվող ճակատագրերի վիճակագրությամբ,
բայց դու բացառություն ես:

***
Հույսդ և հուսալքությունդ էժան մի ծախիր.
աստվածները քմահաճ են:
Դու քո քարքարոտ կավահողը հերկիր.
ինչ լինելու է, թող լինի:

***

Ճանապարհը գալիս է հորիզոնից
ու կորչում հորիզոնում.
նույնիսկ ստվերդ քո մշտական ուղեկիցը չէ,
բայց ամենուր,
ամեն քայլափոխի,
[82] ամեն ներշնչումի և արտաշնչումի հետ
քեզ ուղեկցում է,
քեզ հետևում է,
քեզ պատում է,
քեզ դանդաղ հեռացնում է քեզնից
մեծ ճանապարհի փոշին:

***
Հայր,
եկել է ժամանակը,
ասա՛ նրանց
այնպես,
ինչպես դու ես սիրում ասել.
փողոցային աղմուկի մեջ
տաք շշուկով
ականջից ներս
(տպավորիչ երևալու համար)
խորհրդավոր և ծորուն
- ԴՈՒ՛, Դու՛, դու՛...
լավագույնն իմ արարումներից,
առաջիններից մեկի արյունակիցն ու
վերջիններից մեկի նախապապը:
Հերիք է մահը թշնամի սարքես կյանքի համար:

Լրացավ քո ժամանակը,
բայց ես դեռ հո կա՞մ...

այնտեղ, ուր մահն է

***

Ես ապրում եմ ինչպես ծառը շշի մեջ,
ինչքան որ արմատներս փորձում են Քեզ հասնել
և ինչքան փորձում են Քեզ շոշափել ճյուղերս,
այնքան սեղմվում եմ իմ պարզ ուրվագծին:

Սահմաններիս մեջ ինձ տարրալուծում է
Քո կարոտը:
Ես դառնում եմ միատարր ու համասեռ:

[84] Առայժմ սննդարար եմ ու գոյատև,
հետո... կդառնամ դառնահամ,
հետո... կդառնամ թունավոր,
հետո... կդառնամ թափանցիկ,
հետո... կլռեմ,
ու չի լինի էլ մեզ բաժանող իմ եսը:
Երբ հասնի Քեզ, այլևս չի ծերանա
ու կլինի սովորական աստվածություն,
որ չի կարոտում, որովհետև ամենուր է,
անկախ ամեն ինչից:
Մինչ շիշը նախընտրում է
իր մահկանացու կախյալությունն
իմ անվան տակ:

***
Ընդմիշտ հեռացողի համար ամենահեշտը
մնացյալի հետ կատարյալ անկեղծությունն է,
մինչ նա լրիվ չնախատեսված կերպով
գերադասում է լուռ մնալ:

Մտքերով ընկած,
այս հերթական քաղաքի փողոցներում դանդաղ ճեմելով՝
մեկ-մեկ հասնում եմ էէէ՛է անտաշատի խորքերը...
Ինչպիսի անմարդաբնակ ափեր են քշում ինձ մտքերս,
տեղեր, որ դեռ անուն չունեն,
ուր խելահեղ ժայռերը ճանկռտող ծովի աղի շիթերի մեջ
շնչում եմ իմ ազատության մի ումպ սառը, թարմ օդը:

ՊՈԵԶԻԱԹԵՐԱՊԻԱ*
հիմունքներ

-1-

Պոեզիան
շինարարության 5-րդ հարկից
քո գլխին ընկած քար է:
Բաբախ... ժպիտ... թաթիկով ենք անում...
և ա՛ն-պա՛յ-մա՛ն հրաժեշտից առաջ
օդային համբույր
առանց քեզ շարունակելի աշխարհին:

[86]

-2-

Ընդհանուր առմամբ՝
մենք այստեղ սովորում ենք ապրել
առաջին և վերջին անգամ:
Եթե չի ստացվում
(սովորաբար չի ստացվում),
նորից ենք փորձում:

Չստացված անգամները
պոեզիա դառնալու շանս ունեն:

-3-

Տեսնում ե՞ս,
մեկը աջ ձեռքը ձախ ծոցագրպանը տարավ
և ուղիղ իր սրտի վրա բռնացրեց ականջս:
Վախեցավ, սփրթնեց, գույնը գցեց ասֆալտին,
բայց հետո, երբ ես հեռացա պոեզիայի հետ,
ինքն էլ լսեց... իր սիրտը:

-4-

Անտաշատում երբեք հրդեհներ չեն լինում:
Երկար-բարակ նստում-սպասում ենք մահվանը,
մինչ մահն ամենից շատ զզվում է իրեն սպասողներից:

Մեռնելու ենթակա սուբյեկտն այստեղ
խոնարհվում է, մամռակալում, փտում,
պատվում ուտելի և թունավոր սնկերով,
իսկ մահը չկա, չկա ու չկա:
Բա՛...
Տեսնու՞մ ես՝ ինչ պայմաններում ենք աշխատում...

-5-

Անտաշատում երկար չես ձգի.
արտասվիր աշխարհի աղմուկը։
Մերկությունը պարտադիր պայման է
[88] սերը (Նրան) վայելելու -
արտասվելուց սկսիր... մերկանալ,
որ պոեզիան մենակ չմրսի
մինչ ժպտալու ժամանակը գա։

Կարեն Անտաշյան

անտաշաs. պոեզիա 78%



Մասնավոր տեղեկանք

www.antashat.com

Ջուրն անգույն, անհոտ, անհամ հեղուկ է: Քիմիական բանաձեւը՝ H_2O: Պինդ վիճակում կոչվում է սառույց կամ ձյուն, գազային վիճակում՝ գոլորշի: Երկրի մակերեսի 71%-ը ջրով է ծածկված:

http://wikipedia.org

[90]

Մարդու պտուղը 97%-ով ջրիկ է կազմված, իսկ նորածինը՝ 78%-ով: 50 տարեկանին մոտ՝ մարդը որոշ չափով «կամաքում է», այդ ժամանակ ջուրը մարդու կանգվածի միայն 60%-ն է կազմում:

Բժշկական հանրագիտարան

ՄԱՍՆԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՆՔ

Ա

Ագռավաքար (Ագռավու քար, Միերի դուռ)՝ սրբազան քարաժայռ Վանա բերդի մոտ: Ժայռի վրա պահպանված ուրարտական արձանագրությունն ունի դռան տեսք, ինչի համար էլ ժողովրդական ավանդությունը նրան է վերագրել այն ժայռը, որի մեջ փակվել է աշխարհի անարդարություններից խռոված «Սասնա ծռեր» դյուցազներգության վերջին հերոս Փոքր Միերը: Մի զրույցի համաձայն՝ ամեն տարի, Համբարձման ու Վարդավառի գիշերը, երբ երկինքն ու երկիրը համբուրվում են, Միերն իր հրեղեն նժույգով դուրս է գալիս, շրջում երկնքում և երկրում, բայց համոզվելով, որ դեռ գետինը չի կարող դիմանալ իր ծանրությանը, նորից վերադառնում է իր տեղը: Ապագայում իբր Միերը դուրս է գալու այնտեղից՝ ազատելու հայու աշխարհը չար ուժերից և հիմնելու երջանիկ թագավորություն: Զրույցը հիմնված է Միհր աստծո երկրորդ վերադարձի լեգենդի հետ: Ուրարտական արձանագրությունն իրենից ներկայացնում է Իշփուինիի կազմած հաշտից ցուցակը՝ դիցակարգությունը Խալդի աստծո գլխավորությամբ: [91]

Ազատ անկում՝ շարժում, որի դեպքում ձգողականության ուժից բացի մարմնի վրա այլ ուժեր չեն ազդում: Ուժի ներգործության տակ մարմինը սկսում է շարժվել որոշակի արագացմամբ: Ծովի մակարդակում Երկրի վրա ազատ անկման արագացումը մոտավորապես 9,81 մ/վ^2 է կազմում:

Անահիտ՝ պտղաբերության, արգասավորության, ծննդաբերության, վաղ շրջանում նաև ռազմի աստվածուհին էր հայ դիցարանում: Արամազդի դուստրը: Անահիտը համապատասխանում է պարսկական Անահիթային, հունական Արտեմիսին, հռոմեական Դիանային, եգիպտական Նիիթին: Մ.թ.ա. I դ. Անահիտը հայկական պետական գլխավոր աստվածուհին էր: Նավասարդի սկզբին (օգոստոսի 15-ին) մեծ շուքով նշվում էր Անահիտի գլխավոր տոնը՝ կապված բերքի հասունացման հետ: Տոնախմբությունները վերածվում էին պտղաբերության տոնի, որի ժամանակ բազմաթիվ ուխտավորներ էին հավաքվում անահատական մեհյանների շուրջը: Ծիսակատարությունները ուղեկցվում էին օրեր տևող աղոթքներով, երգերով, խնջույքներով: Քրիստոնեության հաստատումից հետո, Անահիտի պաշտամունքը վերածվում է Մարիամ Աստվածածնի պաշտամունքի: Նրա անունով էր կոչվում հայկական հեթանոսական տոմարի յուրաքանչյուր ամսվա 19-րդ օրը:

Աստղիկ՝ սիրո և գեղեցկության աստվածուհին հայկական հեթանոսական դիցարանում: Համապատասխանում է հունական Աֆրոդիտեին: Աստղիկին նվիրված մեհյանները գտնվում էին Աշտիշատում, Արտաշատում, Անձևաց գավառում՝ Պաղատ լեռան գագաթին, Վանի մոտ՝ Արտամետում: Աստղիկին նվիրված տոնը կոչվում էր Վարդավառ և մեծ հանդիսավորությամբ նշվում էր հուլիսի կեսին: Մ. Աբեղյանն Աստղիկին համարում է նաև ջրի աստվածուհի և գտնում է, որ Գեղամա լեռներում և այլուր հայտնաբերված «վիշապներ» կոչված ձկնակերպ կոթողներն Աստղիկ դիցուհու արձաններն են:

Ավանգարդը (ֆր. *Avant-garde* - «առաջատար ջոկատ») 20-րդ դարասկզբին եվրոպական արվեստում առաջացած ուղղությունների ընդհանրական անվանումն է: Եզրը վերցված է ռազմաքաղաքական բառապաշարից: Ավանգարդը տիրապետող է եղել 1870-1938 թթ.: Այն գեղարվեստի հանդեպ փորձարարական մոտեցում է ցուցաբերում՝ օգտագործելով գեղարվեստի ընդգծված սիմվոլիզմով նորարական արտահայտչամիջոցներ:

Բ

Բուդդա (Սիդհարթա Գաութամա, մ.թ.ա. 624-544)՝ բուդդայականության հիմնադիրն է: Բուդդա նշանակում է լուսավորյալ, ճշմարտությանը հասու եղած, պայծառացած մարդ: Բուդդան ծնվել է արիական շակյա ցեղի Գաութամա տոհմում: Երկար թափառումներից ու որոնումներից հետո նա եկավ ճշմարտությանը, այսինքն՝ հայտնաբերեց տառապանքից փրկվելու միջոցը:

Գ

Գեն՝ ժառանգական տեղեկատվության նյութական կրիչ, որի հանրագումարը ծնողներն իրենց ժառանգներին են փոխանցում բազմացման ժամանակ:

Գերհաղորդականություն՝ որոշ նյութերի՝ էլեկտրականության հանդեպ փաստացի զրոյական դիմադրության հատկությունն է կոնկրետ ջերմաստիճանում:

Է

Էնդորֆիններ՝ բնականորեն գլխուղեղի նեյրոններում արտադրվող քիմիական պոլիպեպտիդային միացություններ են, որոնք ունեն ցավազրկելու և զգայական վիճակի վրա ներազդելու հատկություններ: Էնդորֆինի քանակի ավելացումը մարդուն հասցնում է էյֆորիայի: Այն երբեմն անվանում են «բնական թմրանյութ» կամ «ուրախության հորմոն»: Սերը, ստեղծագործումը, փառքը, իշխանությունը և նմանօրինակ այլ ապրումներն ավելացնում են ուղեղում

էնդորֆինի քանակը: Երջանկության զգացողությունը կենսաքիմիական առումով նույնպես կապված է էնդորֆինի սինթեզի հետ:

Էվոլյուցիան (կենսաբանության մեջ) մի քանի սերունդների ընթացքում տեսակների ժառանգական հատկանիշների փոփոխության գործընթացն է: Օրգանիզմների վերարտադրության ժամանակ նրանց սերունդները դրսևորում են նոր կամ վերափոխված հատկանիշներ: Էվոլյուցիան ի հայտ է գալիս այն դեպքում, երբ ժառանգական տարբերությունները դառնում են ընդգծված կերպով առավել հաճախակի կամ առավել սակավ:

Թ

Թերապիա (հուն. θεραπεία)՝ բուժում, խնամք, հոգատարություն:

Ի

Իմպրեսիոնիզմը (ֆր. impressionnisme, impression՝ տպավորություն բառից) XIX դարի երկրորդ կեսին Ֆրանսիայում սկզբնավորված արվեստի ուղղություն է: Իմպրեսիոնիզմը գեղանկարչության մեջ նոր աշխարհընկալման և նոր գեղանկարչական տեխնիկայի առումով երկակի հեղաշրջում մտցրեց: Իմպրեսիոնիստական գեղանկարչության մեջ աշխարհը շարժուն է, վաղանցիկ, այդ պատճառով [93]
իմպրեսիոնիստները փորձում են պատկերել ներկայի անցողիկ ակնթարթը:

Ինքնասպանությունների կանխարգելման համաշխարհային օր: Ըստ համաշխարհային առողջապահական կազմակերպության (ՀԱԿ) տվյալների ներկայումս տարեկան ինքնասպանությունների թիվը հասնում է մեկ միլիոնի: Մեր մոլորակում բռնի մահվան դեպքերի կեսը ինքնասպանություններին է բաժին ընկնում: Միտումներն այնպիսին են, որ 2020 թվականին ինքնասպանությունների թիվը կաճի մեկ ու կես անգամ: Այս պատճառով է, որ ՀԱԿ-ը սեպտեմբերի 10-ը հռչակել է ինքնասպանությունների կանխարգելման համաշխարհային օր:

Ինֆարկտը (լատ. infarcire՝ սկսել, խցանել) արյան անբավարար շրջանառության արդյունքում որևէ օրգանի կամ նրա հատվածի մահացությունն է (նեկրոզ):
Առավել ընդունված տարբերակումներն են՝
- միոկարդի ինֆարկտ,
- գլխուղեղի ինֆարկտ (ուղեղի իշեմիկ կաթված):

Խ

Խաղողօրհնեք: Հայ առաքելական եկեղեցին տոնում է Սբ.

Աստվածածնի Վերափոխման տոնը, որը եկեղեցու 5 Տաղավար (գլխավոր) տոներից է: Շարժական է, նշվում է ամեն տարի օգոստոսի 15-ին մոտ կիրակի օրը: Աստվածածնի Վերափոխման տոնի օրը պատարագ է մատուցվում, որից հետո կատարվում է նաև խաղողօրհնեքի արարողությունը, օրհնվում է նաև տարվա ողջ բերքը: Սա հեթանոս Հայաստանում Անահիտ աստվածուհու պաշտանմունքին նվիրված բերքի հասունացման հետ կապված տոնի քրիստոնեական վերափոխումն է:

Ծ

Ծիծեռնակաբերդը հուշարձան է՝ նվիրված Հայոց Ցեղասպանության զոհերին: Գտնվում է Երևանում՝ համանուն բլրի վրա: Ամեն տարի ապրիլի 24-ին հարյուր հազարավոր հայեր և օտարազգիներ բարձրանում են այստեղ՝ հարգանքի տուրք մատուցելու 1915 թվականին Օսմանյան Կայսրության տարածքում թուրքական կառավարության իրագործած Հայոց Ցեղասպանության զոհերին:

Ծիր կաթին գալակտիկան կամ ուղղակի Գալակտիկան հսկայական աստեղային համակարգ է, որի մասն են կազմում մեր Արեգակնային համակարգը, անզեն աչքով երևացող բոլոր առանձին աստղերը և որպես «Հարդագողի ճանապարհ» հայտնի աստղային կուտակումները: Հաբբլի դասակարգմամբ՝ այն SBbc տիպի պարուրաձև գալակտիկա է, որը Անդրոմեդա (M31) և Եռանկյուն (M33) գալակտիկաների հետ միասին Տեղական խումբ է կազմում: Այս խումբն էլ իր հերթին մտնում է Կույսի գերկուտակումների կազմի մեջ:

Կ

«Կապիտալ» (գերմ. Das Kapital)՝ քաղաքատնտեսության մասին Կ. Մարքսի գլխավոր աշխատությունն է: Այն ամփոփում է կապիտալիզմի սուր քննադատությունը:

Կենսոլորտը Երկրի կենդանի օրգանիզմներով բնակեցված, նրանց ազդեցության տակ գտնվող և նրանց կենսագործունեության արդյունքով հագեցած երկրաբանական կեղևն է, «կյանքի թաղանթը», Երկրի համաշխարհային էկոհամակարգը:

Կետ երկնագույն (կապույտ) (լատ.՝ Balaenoptera musculus)՝ բեղիկավոր կետերի ենթախմբի շերտավորների ընտանիքի ներկայացուցիչ: Երկրի վրա երբևէ ապրած հայտնի ամենախոշոր կենդանին է (կշռում է 150 տոննա, երկարությունը հասնում է 33 մետրի): Տարածված է եղել Արկտիկայից մինչև Անտարկտիկա: Ներկայումս երկնագույն կետերը ոչնչացման եզրին են և ընդգրկված են կարմիր գրքում:

Կոմբինացիան (շախմատում) ֆիգուրի այն զոհաբերումն է, որ անհրաժեշտ է նպատակին հասնելու համար: Յուրաքանչյուր կոմբինացիայում տարբերակում են.

1. Կոմբինացիայի անցկացման հնարավորությունը մատնանշող մոտիվը կամ իրավիճակը:
2. Կոմբինացիայի իրականացման միջոցը՝ գաղափարը:
3. Կոմբինացիայի իրացմամբ ձեռք բերված արդյունքները՝ նպատակը:

Կոմբինացիոն տեսողությունը ուժեղ շախմատիստի կարևորագույն հմտություններից մեկն է, քանի որ հենց կոմբինացիաներն են շախմատային պարտիան արդյունավետ և տեսարժան դարձնում:

Հ

Համաշխարհային ճգնաժամը (2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը և 2000-ականների վերջի տնտեսական հետընթացը) 2008 թ. պետությունների մեծամասնության հիմնական տնտեսական ցուցանիշների վատթարացմամբ արտահայտված Ֆինանսատնտեսական ճգնաժամն ու նույն տարվա վերջում սրան հետևած համաշխարհային տնտեսական հետընթացն է: 2008 թ. սկզբին ճգնաժամը համաշխարհային բնույթ ստացավ և աստիճանաբար սկսեց արտահայտվել արտադրության ծավալների զանգվածային կրճատմամբ, հումքի պահանջարկի և գների նվազմամբ, գործազրկության աճով:

Հիպերտոնիան (զարկերակային հիպերտենզիա) զարկերակային ճնշման բարձրացման ախտանիշն է: 90—95% դեպքերում ԶՀ-ն բնահյութային զարկերակային հիպերտենզիա է, մնացած դեպքերում ախտորոշվում են ԶՀ-ի երկրորդական ախտանիշներ:

Հորմոնները էնդոկրինային գեղձերի (և ոչ միայն) կողմից անմիջապես արյան մեջ արտազատվող ազդանշանային քիմիական նյութեր են, որոնք բարդ և բազմակողմանի ազդեցություն են գործում որևէ օրգանի, ամբողջ օրգանիզմի կամ նրա առանձին թիրախային համակարգի վրա:

Հումանիզմ (լատ. humanitas - մարդկայնություն, լատ. humanus - մարդկային, լատ. homo - մարդ)՝ Վերածննդի շրջանում ձևավորված փիլիսոփայական աշխարհայացք, որը մարդուն որպես բարձրագույն արժեք է դիտարկում:

Մ

Մազոխիստը զուգընկերոջ կողմից ստորացումից և նվաստացումից սեռական գրգռվածություն և բավարարում ստացող անձն է:

Մանդալ (սանսկիտ मण्डल - շրջան, սկավառակ)՝ բուդդիզմում մեդիտացիայի ժամանակ օգտագործվող ծիսական առարկա, սրբազան խորհրդանշան: Այն ասեղնագործում են գործվածքի վրա, նկարում են ավազին և զարդարում գունավոր փոշիներով: Պատրաստում են նաև մետաղից, քարից, փայտից: Արևելքում Մանդալներն այնքան են սրբացվում, որ պատրաստվում են հատուկ ծիսական երգեցողությամբ և կարող են երկրպագության առարկա դառնալ: Որոշ մանդալներ (օրինակ՝ Կալաչակրային նվիրված)՝ պատրաստում են գունավոր փոշիներից՝ կոնկրետ ծիսական արարողակարգով: Պատրաստումից հետո ավիրումը այդպիսի մանդալների արարողակարգի մասն է կազմում:

Մեդիտացիան (լատ. *meditatio*- մտորել, խորհել) մտավոր գործընթաց է: Մինչ 20-րդ դարն այս եզրը նշանակում էր խորամուխ լինել, կենտրոնանալ խնդրի շուրջ, ներքին աղոթք (հազվ.), ինչպես նաև փիլիսոփայական լիրիկայի որոշակի ձև էր: 19-րդ դարի վերջին, երբ եվրոպացիները սկսեցին հետաքրքրվել բուդդիզմով ու հնդկական յոգայով, այս եզրի տակ սկսեցին հասկանալ հոգեկան ներաշխարհը հատուկ ներքին կենտրոնացվածության վիճակի բերելու գործընթացը: Այն գիտակցության միջանկյալ մարմնական և վերմարմնական վիճակն է, որը հաճախ անվանում են մեդիտացիոն տրանս:

Մեհենագիր: Հայաստանն այն հազվագյուտ երկրներից է, որտեղ վկայված են գրի ծագման ու զարգացման բոլոր փուլերը: Այստեղ առկա տեսակներն են՝ վաղ պատկերագիր, մեհենագիր, սեպագիր, այբուբեն: Որոշ մասնագետների կարծիքով՝ մաշտոցյան այբուբենը մեր նախնիների կիրառած 12-րդ գրահամակարգն է, որը կարելի է համարել հայոց մեջ գրային մտածողության կատարելության խտացումը:

Միերի դուռ: Տե՛ս Ագռավաքար:

Մինարեթ (արաբ. منارة - «մանարա»՝ փարոս)՝ իսլամական ճարտարապետությանը բնորոշ աշտարակ (կլոր, քառանկյուն կամ բազմանկյուն կտրվածքով), որտեղից հոգևորականները հավատացյալներին աղոթքի են կանչում: Մինարեթները կառուցվում են մզկիթների մոտ կամ մզկիթային համալիրների մաս են կազմում: Փոքր մզկիթները սովորաբար մեկ, իսկ միջինները երկու մինարեթներ են ունենում: Ստամբուլի սուլթանական մեծ մզկիթներն ունեն 4-6 մինարեթներ: Ամենաշատ քանակությամբ (շուրջ տասը) մինարեթներ ունի Մեքքայի Ալ-Քարամ մզկիթը:

Ն

Նեյրոն (նյարդային բջիջ)։ Նյարդային համակարգի կառուցվածքային-ֆունկցիոնալ միավոր։ Այն բարդ կառուցվածք և խիստ ընդգծված նշանակություն ունի։ Բջիջը բաղկացած է կորիզից, մարմնից և ելունդներից։ Մեկ մարդու օրգանիզմում ավելի քան հարյուր միլիարդ նեյրոններ կան։

Չ

Չաթ (անգլերեն *chat*, զավզակություն, խոսակցություն, զրույց)՝ իրական ժամանակային ռեժիմում ինտերնետային ցանցի օգտագործողների փոխադարձ շփման միջոցը, ինչպես նաև տվյալ շփումն ապահովող ծրագրերը։

Ս

Սասունցի Դավիթը «Սասնա Ծռեր» հայկական ժողովրդական էպոսի հերոսներից է։ Չնայած նրան, որ Սասունցի Դավթին նվիրված է էպոսի չորս ճյուղերից միայն մեկը, ամբողջ էպոսը հաճախ անվանում են «Սասունցի Դավիթ»։

Սբ. Սարգսի տոնը Հայ Առաքելական Եկեղեցին նշում է Առաջավորաց պահքի վերջին օրը։ Այն հռչակվել է Երիտասարդների օրհնության օր։ Սբ. Սարգսի տոնին նախորդող գիշերը երիտասարդները աղի բլիթ են ուտում և այդ աղի բլիթի հետ են կապում իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը։ [97]

Սի-բեմոլ մինորը նուրբ սի-բեմոլով մինորային տոնայնություն է։ Նույնն է, ինչ «b-moll»-ը։ Ունի բանալու հինգ բեմոլ։

Սննդային շղթան մի շարք բույսերի, կենդանիների, սնկերի և միկրոօրգանիզմների այն համախումբն է, որի բաղկացուցիչները միմյանց հետ փոխկապված են սնունդ-սպառող հարաբերությամբ։ Այս շղթայում ամեն հաջորդող օղակի օրգանիզմները սնվում են նախորդ օղակի օրգանիզմներով։ Այդ կերպով իրականացվում է բնության նյութափոխանակության հիմքում ընկած էներգիայի և նյութերի շղթայական տեղաշարժը։ Շղթայից շղթա յուրաքանչյուր անցման դեպքում պոտենցիալ էներգիայի մեծ մասը (80—90 %) կորչում է ջերմային էներգիայի տեսքով։ Այդ պատճառով յուրաքանչյուր շղթայում օղակների թիվը սովորաբար չի գերազանցում 4—5-ը։

Սպազմ (հուն. sposmo’s, spa’o - ձգվել բառից)՝ մկանի կամ մկանային խմբի ակամա կծկում (ջղաձգություն, ջղակծկում, ջղացնցում), որը սովորաբար ուղեկցվում է կտրուկ ցավով։

Վ

Վահագն՝ պատերազմի, քաջության և հաղթանակի գերագույն աստվածը հին հայկական դիցաբանության մեջ: Որոշ աղբյուրներում ու առասպելազրույցներում նաև վկայվում է որպես արեգակնային աստված: Վահագնին ձոնված դիցաբանական երգում նա պատկերվում է որպես սրբագործված չորս տարրերի՝ երկնքի, երկրի, ծիրանի ծովի և ծխակարմիր եղեգնի երկունքից ծնված խարտյաշ պատանի՝ հրացայտ վարսերով, բոցակեզ մորուսով և արեգակնային աչքերով: Ըստ առասպելաբանության, կենսատու լույս անձնավորող Վահագնը՝ որպես քաջ որսորդ, մարտնչում է խավարը, չար ու վնասակար ուժերը մարմնավորող վիշապների դեմ: Այդ պատճառով էլ նրան տրվել է Վիշապաքաղ մականունը:

Վանա լիճն անհոսք աղի լիճ է Հայկական լեռնաշխարհում, ներկայիս Թուրքիայի ծայր արևելքում: Գտնվում է Հայկական Տավրոսի հյուսիս–արևելյան մասի, Կորդվաց լեռների, Կոտուր լեռնաշղթայի և Ծաղկանց լեռների միջև, 1720 մ բարձրության վրա: Երբեմնի մեծ ջրային ավազանի մնացորդ է: Մակերեսը 3760 քառակուսի կմ, առավելագույն լայնությունը՝ մոտ 51 կմ, խորությունը՝ մինչև 145մ: Վանա լճի հայելին գրեթե 2.5 անգամ մեծ է Սևանա լճի հայելուց: Ունի անկանոն քառանկյան տեսք, խիստ կտրտված է, հաճախ՝ զառիթափ ափերով: Հյուսիս–արևելքում Արճեշի խորշն է, լճում՝ Լիմ, Առտեր, Կտուց, Աղթամար կղզիները, ափերին՝ Դևեբոյնի, Ծղուկ, Կտուց հրվանդանները: Օրգանական աշխարհն աղքատ է: Ձկներից կա միայն տառեխ: Թռչնաշխարհին բնորոշ են որորներն ու ջրագռավները, որոնք այստեղ են գալիս հարևան Նազիկ լճից:

Վարդերի հեղափոխություն (վրաց. ვარდების რევოლუცია - «վերդեբիս ռևվալյուցիա»)՝ 2003-ին Վրաստանում տեղի ունեցած գունավոր հեղափոխություն: Հեղափոխության հիմնական շարժառիթը 2003թ. նոյեմբերի 2-ի պառլամենտական ընտրությունների արդյունքների կեղծումն էր: Հեղափոխության արդյունքում՝ Էդուարդ Շևարնադզեն վայր դրեց իր լիազորությունները, և երկրի ղեկավարումն անցավ ընդդիմադիր Միխաիլ Սահակաշվիլիին:

Վիշապ (վիշապաքար, աժդահակ)՝ նախապատմական Հայաստանին բնորոշ մեգալիթյան հուշարձան, քարակոթող՝ պատրաստված մեկ ամբողջական քարակտորից: Գտնվել են Գեղարքունիքում, Արագածոտնում, Ջավախքում: 4 մետր և ավելի բարձրությամբ սյունաձև հսկայական քարարձաններ են՝ որպես կանոն տեղադրված լեռներում՝ լճերի և գետերի մոտակայքում: Նրանց վրա կան ձկների, սյան վրա քաշած ցլի մորթու, ցլի գլխի և ջրային թռչունների համադրությամբ փորագրություններ: Վիշապներից ամենահները թվագրվում են մ.թ.ա. 18-16-րդ դարերին: Այս առեղծվածային հուշարձանները մեկնաբանող մի քանի տեսություններ կան: Մի

տեսությունը պնդում է, որ դրանք ջրի ակունքները հսկող առասպելական վիշապներ են (Բ. Պիատրովսկի)։ Ըստ մեկ այլ տեսության՝ նվիրված են պտղաբերության, սիրո և ջրի հովանավոր աստվածուհի Աստղիկի և հայկական դիցարանի մեռնող-հառնող Արա Գեղեցիկ աստվածության պաշտամունքին (Մ. Աբեղյան)։ Վիշապներին ի սկզբանե երկրպագել են իբրև ջուր, անձրև և հարստություն պարգևող ոգի, որն իր պոչը քարշ տալով երկրի վրա՝ նշագծել է ջրանցքներ փորելու ուղիները։

Տ

Տանտրան (սանսկրիտ तन्त्र - տանտրա, բառացի՝ անընդհատություն, կապ, գիծ)՝ մարդու ինքնագիտակցվածության համար նախատեսված ֆիզիկական և հոգևոր տեխնիկաների համակարգ է։ Հնդկական տերմինաբանության մեջ տանտրիզմը ուսմունք է տիեզերքի երկակի բնության մասին, որում ներկայացված են արական և իգական սկիզբների երանության և ունայնության անխաթար կապը։

Տիգրան Մեծ (Տիգրան Բ Մեծ, մ.թ.ա. 140 - մ.թ.ա. 55)։ Հայոց թագավոր մ.թ.ա. 95-ից, պետական և ռազմական գործիչ։ Տիգրան Մեծը ստեղծել է աշխարհակալ տերություն մոտ 3 միլիոն քառակուսի կիլոմետր տարածքով։ Այն պատմության մեջ մտել է «ծովից-ծով Հայաստան» անվանումով։

Փ

«Փոքրիկ Իշխան» (ֆր. Le Petit Prince)՝ Անտուան դը Սենտ Էքզյուպերիի առավել հայտնի ստեղծագործություններից է։ Հրատարակվել է 1943 թ. որպես մանկական գրքույկ։ Այն պոետիկ հեքիաթ է մանկական անաղարտ հոգու արիության և իմաստնության մասին, այնպիսի կարևոր ոչ մանկական հասկացությունների մասին, ինչպիսիք են կյանքը և մահը, սերն ու պատասխանատվությունը, ընկերությունն ու հավատարմությունը։

Ք

Քերովբե: Հիմնվելով Դիոնիսիոս Արիոպագացու «Հաղագս երկնային քահանայապետութեան» աշխատության վրա՝ հրեշտակաբանությունը առանձնացնում է հրեշտակային իննաստիճան դասակարգություն՝ այն բաժանելով երեք եռյակի.
1. սերովբեներ, քերովբեներ, աթոռներ,
2. տերություններ, զորություններ, իշխանություններ,
3. պետություններ, հրեշտակապետեր, հրեշտակներ։

Քրիստոս: Հիսուս Քրիստոս (հուն. Ἰησοῦς Χριστός; Հիսուս

Նազովրեցի, Հիսուս Փրկիչ, եբր. יֵשׁוּע, Եշուա (Հիսուս), լատ. *Iesus Christus*, արամ. ܝܫܘܥ, արաբ. يَسُوع, Յասուա; իսլամում արաբ. عِيسَىٰ՝ Իսա, ոչ ուշ քան մ.թ.ա 4 - մ.թ.ա 26-36): Աստծո կողմից մարդկանց մոտ ուղարկվելով՝ Հիսուս Քրիստոսը պետք է բժշկեր մեղքով վնասված մարդկային բնությունը՝ այն իր միջոցով միացնելով աստվածայինի հետ: Խաչվելուց հետո Հիսուսը հարություն առավ մեռելներից և համբարձվեց Երկնային Արքայություն: Նրա երկնային կյանքն ու ուսմունքը նկարագրված են քրիստոնեության մեջ սուրբ համարվող 4 կտակարաններում:

Օ

Օշո (Չանդրա Մոհան Ռաջնիշ, հնդ. चन्द्र मोहन रजनीश, 1931-1990 թթ.)՝ հնդիկ հայտնի կրոնական գործիչ, միստիկ ուսմունքի հիմնադիրը, 70-ականներից հայտնի է որպես Բհագվան Ծրի Ռաջնիշ, առավել ուշ՝ որպես Օշո (հնդ. ओशो) կամ Ռավշան (հնդ. गोहनीश्र): Մշակել է մեդիտացիաների բազմաթիվ նոր համակարգեր՝ կապված երաժշտության, շարժման և շնչառության հետ: 1969-1989 թթ. գրառված Օշոյի զրույցները նրա հետևորդների կողմից հավաքվել և հրատարակվել են 100-ից ավել գրքերի տեսքով: ԱՄՆ-ում գտնվելու ընթացքում հիմնադրել է Ռաջնիշպուրամ քաղաքը:

[100]

Օպերայի խաչմերուկը Երևանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքին հարող Թումանյան և Մաշտոց փողոցների խաչմերուկն է:

Ֆ

Ֆենիլէթիլամինը (2-ֆենիլէթիլամին, β-ֆենիլէթիլամին, 1-ամին-2-ֆենիլ-էթան) հալյուցինոգեն և խթանիչ հատկություններով որոշ բնական հոգեմետ նյութերի նախնական բաղկացուցիչը հանդիսացող քիմիական նյութ է:

Հ

«L'histoire d'un Amour» (ֆր. սիրո պատմություն) պանամացի երգահան Կառլոս Էլետա Ալմարանի հայտնի «Historia de un Amor» ստեղծագործության ֆրանսերեն կատարումն է իտալական արմատներով ֆրանսիացի երգչուհի Դալիդայի կողմից:

K

Krisis՝ ճգնաժամ (հուն. krisis-որոշում, շրջադարձային կետ)՝ հեղաշրջում, անցումային ժամանակաշրջան, բեկումնային կետ, որի դեպքում նպատակին հասնելու անհամապատասխան միջոցների կիրառումն ի հայտ է բերում չկանխատեսված խնդիրներ: Ճգնաժամը չինարենում երկու հիերոգլիֆներով է գրվում. «վեյ»՝ «վտանգ», «վախ» և «ցզի»՝ «հնարավորություն»:

V

Vip (անգլ. Very Important Person)՝ անգլերենից բառացի թարգմանությամբ նշանակում է «հույժ կարևոր անձ»: Իր ֆինանսական, քաղաքական, սոցիալ-մշակութային կամ այլ դիրքի շնորհիվ անհատական արտոնությունների իրավունք ունեցող կամ դրան հավակնող ֆիզիկական անձ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անտաշատ (տուրիստական ուղեցույց) ... 3

Բերքի տոն ... 7
Խորհրդավոր նախաճաշ ... 9
Զուշանաս, էլի ... 10
Տանգո ... 12
Գլխապտույտ ... 14
Ծննդոց ... 15
Անուշիկի պատերազմը ... 16
Արևի մասնակի խավարում ... 19
Արծվաքիթ գրիպ ... 20
Տաք պահի՝ կանցնի ... 22
Գործ No 2110-08 ... 24
Իմ (առայժմ) ցավը կամ մի շնանար ... 26
Գարունքացավ ... 27
Կոկտեյլ՝ վարդագույն լուսին ... 28
Քյաֆթառ Եվային ... 30
Սի բեմոլ-մինոր ... 32
Հակլալոնծի ... 34

Զրո ... 35
[102] Սկզբնախաղ ... 37
Կոմբինացիա N 1 «Տուն-տունիկ» ... 38
Կոմբինացիա N 2 «Պատերազմի ծոռները» ... 39
Կոմբինացիա N 3 «Թոկից փախածը» ... 40
Կոմբինացիա N 4 «Փրկիչը» ... 41
Կոմբինացիա N 5 «Ինֆարկտ» ... 44

Ագռավաքար ... 45
Ագռավաքար (ազգային հոգեվերլուծության սեանս) ... 47
Հայրենասիրական բնույթի (ճամփորդական նոթագրումներ) ... 48
Հարևանիս (կենցաղային անհանդուրժողականության շուրջ) ... 50
Վերևն Աստված կա ... 52
Պապենական գլխացավ ... 53
Միոտնուկներ ... 54
Էա. քարանձավաբնակ ծովաստված ... 56

Պոեզիաթերապիա ... 59
Krisis ... 61
Մխիթարվիր ... 62
Սպասում ... 64
Կանգառ ... 65
Մոտավորապես կյանք ... 66
Աղմուկ ... 68
Աչքաուլունքներ ... 69
Անապատ ... 70

Քո միջև 72
Միամիտք 73
Կյանքը շարունակվելու սովորություն ունի 74
Աշխարհը փրկելու փորձ (ինչ անենք, թե ապարդյուն) 75
Ավազե մանդալներ 76
Մինչև ականջախեցիները լռությամբ լեցուն 76
Հանուն ծիսակարգի ես միշտ շիկնում եմ....77
Գլուխս պտտվեց Ծիր կաթինի ուղղությամբ....78
Կանգառային սիլի-բիլին....79
Մեր ճանապարհներն ու մտքերը շրջագծված են....80
Հույսդ և հուսալքությունդ էժան մի ծախիր....81
Ճանապարհը գալիս է հորիզոնից 82
Հայր, եկել է ժամանակը....83
Ես ապրում եմ ինչպես ծառը շշի մեջ....84
Ընդմիշտ հեռացողի համար ամենահեշտը....85
Պոեզիաթերապիա 86

Մասնավոր տեղեկանք....89
Մասնավոր տեղեկանք....91

Կարեն Գառնիկի Անտաշյան
«անտաշատ. պոեզիա 78%»

Карен Гарникович Анташян
“анташат: 78%-ов поэзии”

Karen G. Antashyan
“antashat: poetry 78%“

Խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Սրբագրիչ՝ Հասմիկ Հակոբյան

Մասնավոր
տեղեկանքը՝ Նարե Ղուկասյանի

Ծապիկին՝ մարդու ձվաբջիջ
(մասշտաբը՝ $1{:}51 \times 10^{-5}$)

Էջադրումը՝ Մարիամ Էդիլյանի

Գրքի պաշտոնական կայքը՝ www.antashat.com

Նախագիծը՝ iARAR [ideas studio]

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Այս գրքի ոչ մի հատվածը չի կարող օգտագործվել մեկ այլ ձևի մեջ կամ այլ միջոցներով առանց հեղինակային իրավունքին տիրապետող անձի գրավոր համաձայնության:

© Անտաշյան Կ.Ա., 2009
© iARAR [ideas studio], 2009

Նշումների համար

անտաշաս. պոեզիա 78%

Կարեն
Անտաշյան
03 փետրվար, 1983թ.

անտաշյան

antashat.com

2009

պոեզիա 78 %

Երևան

ISBN 978-9939-53-502-9

9 789939 535029

iarar
ideas studio